

Ս Ի Ո Ն

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԴԷՄ

Ս Ի Ո Ն

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՅԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱԿՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ԲՈՎԱՆՓԱԿՈՒԹՅՈՒՆ

	Երես
ԽՐԲԱԿՐԱԿԱՆ	
— Հալեպ եւ Անթիլիաս.	* * * 353
ԿՐՕՆԱԿԱՆ	
— Կենդանի օրինակը.	Թ. Ե. Գ. 356
— Ճեմարիս լայնախոնուքիւնը.	Թ. Ե. Գ. 357
Հոգեւոյ Տ. Բաբգէն Կաթողիկոս — Կենսագրական.	Գ. 358
ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ	
— «Յնձան Թաբո՛ր եւ Հերմոն...».	Թ. 362
Դուրեան Գրական Մրցանակաբաշխութեան առթիւ կարդացուած ճառը.	Մկրտիչ Արեւսյ. Աղաւունքի 363
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Գննական Տեղեկագիր Պրօֆ. Ն. Ազունցի ի մասին Տ. Գա- րեգին Արեւսյ. Յովսէփեանի «Հոգեւոր Կեդրոններ եւ Դլածորի Բարձր Դպրոցը» ուսումնասիրութեան.	366
— Նորագիւտ Հայերէն մի կարեւոր արձանագրութիւն Ամբերդի մէջ.	Գրաւեցին Արեւսյ. 372
ՊԱՂԵՍԻՆԱԿՐԱԿԱՆ	
— Զինորտութիւնը Գեներալարքի ծովակին վրայ եւ Սուրբ Աւետարանը.	Հայացոց՝ Մ. Ե. Ն. 375 Արսոյս Արեւսյ 381
Դիրք մը.	385
Նօթ եւ ճիշդ.	
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ	
— Ամսօրեայ լուրեր.	386

Մ Ի Ո Ն

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բոլոր երկիրներու համար Սինդի Տարեկան բաժնեգինն է
Անգլ. Շէկի 6 (Ամեր. Տուր 1.50) կամ անոր համարժէքը.

Եռամսեայ կամ վեցամսեայ բաժանորդագրութիւն չկայ,

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է

Հասցէ՝ Rédaction de la Revue Arménienne ՅԵՐՈՍ

Patriarcat Arménien

JÉRUSALEM — Palestine



ՄՕՏ ՕՐԷՆ ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

ՀԱՒՈՒՑ ԹԱՌԻ ԱՄԵՆԱՓՐԿԻԶԸ

ԵՒ

ՆՈՅՆԱՆՈՒՆ ՅՈՒԹԱՐԶԱՆՆԵՐ



Օ Ր Ա Յ Ո Յ Յ

1937

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍՏ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱԼԵՊ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ

Այս երկու անունները այլ ևս կապուած պիտի մնան իրարու հետ, Կլիփ-կիոյ Աթոռին ներկայ պատմութեան մէջ գէթ :


Հալէպ, իբրեւ ամենէն բարգաւաճ և հաւատարիմ թեմերէն մին կաթողիկոսական այդ վիճակին, կանուխէն ալ անշուշտ խորհիլ կուտար այդպիսի կըցորդութեան մը վրայ, բայց հիմակ աներկեանօրէն աւելի սերտ և նուիրագործուած է այդ կապը, ոչ միայն որովհետեւ Բերիոյ շրջանը, որ այժմ մանաւանդ, ամենէն բազմամարդը և եկեղեցական ու ազգային տեսակէտով ամենէն կենսախայտն է կլիկիեան պարագրութեան մէջ, այլ նաեւ որովհետեւ իր հինաւուրց և պատմական Մայր-Եկեղեցին, ուր օծուած էր մին և թաղուած էին երեքը նոյն Աթոռին հայրապետներէն, եղաւ վեհավայր այն Տաճարը, ուր ընդունեց կաթողիկոսական ձեռնադրութիւնը և զտաւ իր վերջին հանգստարանը՝ յաւէտ անմոռանալին հոգեւոյս Տ. Բարգէն Աթոռակից կաթողիկոս, որուն ստեղծագործ տաղանդին դաշտը եղաւ Անթիլիաս :

Ու այդ երկու անունները սիրոյ և սուգի լծորդութեամբ խառնուած են հիմակ այլ ևս իմ սրտիս եւ յիշողութեանս մէջ ալ այն օրէն ի վեր մանաւանդ, ուր զացի տեսնել առաջինին մէջ գերեզմանը՝ ուր իր մարմինն է հանգչած ի ջուռ մահու, և երկրորդին մէջ՝ այն կեանքը, ուր տեսայ թէ իր գործին մէջ կ'ապրի իր հոգին :

Ձկրցի զսպել սրտիս յուզմունքը, երբ ծունը դրի նախ իր շիրմին առջև, այժմ արդէն անյայտացած վէմ մը, զոր մանուկ մը երկու քայլով պիտի կարենար չափել, և յետոյ այն բեմին վրայ, ուր վեց տարիներ առաջ Հոգւոյն սրբալոյս իւղը կ'ընդունէր իր զլիտուն վրայ՝ հաւատքի եւ յոյսի համազօրած խանդավառութեան մը մէջ : Բայց խաղաղեցան իմ զգացումներս, երբ առաջին քայլափոխիս իսկ Անթիլիասի խոնարհ հայրապետանոցէն ներս՝ ձայն մը կարծես իմ մէջն ըսաւ ինծի. «Ձէ մեռեալ, այլ ննջէ» :

Մարդիկ կ'ապրին արդարեւ իրենց գործին մէջ, երբ այդ գործը ծնունդն է սուրբ և բարձր գաղափարի մը :

Ու յաւէրժայիշատակն Բարգէն վեհ, ինչպէս կը վկայեն իր համակիրներն ու հակակիրները միանգամայն — որոնցմէ ունէր անշուշտ ինքն ալ՝ ինչ-



70966

պէս ամէն ոք որ իւրացուցած մտաւորպարի մը կ'ուզէ ծառայել — ազնիւ եւ վեհ սկզբունքի մըն է միայն որ նուիրուեցաւ արդարեւ Անթիլիասի իր գործին կազմակերպութեան ամբողջ աշխատանքին մէջ:

Երկու գիշեր եւ ցերեկ մը ամբողջ ֆաշիստ այդ հաստատութեան մէջ, ամէն վայրկեան, ամէն քայլափոխիս իր սնունդն ու յուշըրը զգալով իմ մէջս:

Պարզ բայց սրտազրաւ եկեղեցին, ուր, խաչկալէն մինչեւ բանկալին փեղկը, ամէն ինչ իր ցուցմունքովն էր յարգարուած. հանդիսական դահլիճը, ուր կիլիկեան անցեալը ոգեկոչող որմանկարները պատմապէս իր ճաշակը կը մատնանշեն. Տպարան կոչուած զետնայարկ սենեակը, ուր փոքրիկ ոտնամամուլը իր վերջին երկին վրայ կը ճռնէ. մատենադարանը, ուր գրեքերուն դասաւորմանը մէջ իր խնամքին մանրակրկիտ ճշտութիւնը կը ցուցնեն. աշակերտաց դասարանը, ճաշարանը եւ ննջարանը, ուր հօր մը Ժուժկալ բայց աննախանձ սիրոյն տնտեսութիւնը կը զգացուի. բակին մէջ բրգացած աղիւսներու դէզը, որ խորհիլ կուտայ կանգ առած իր շինարարական վերջին ձեռնարկին վրայ. տղոց ընդարձակ խաղավայրը ու անոր կշտին՝ խոխոլացող առուակի մը յայնկոյս կողմը հովանաւորող մայրիներու պուրակը՝ ուր կ'երթար մերթ ընդ մերթ, գիրք մը անութիւն. Ժառանգաւորներն ու մանկապարտէզի սաները՝ որոնք ներս մըտնող մէն մի կառքէ կարծես իր իջնելը կ'ակնկալեն դեռ տեսնել. իր ձեռնասունները, սարկաւազ եւ վարդապետ, որոնց նայուածքին մէջ իր արցունքը կը փայլի տակաւին. իր աշխատասենեակը՝ ուր ցամքած կաղամարին վրայ սպաւորի հակումով ինկած է իր զրիչը. ո՛հ, ասոնք ամէնքը իր պատմութիւնը կ'ընեն քեզի. ու այս ամէնուն վրայ խոցուած բայց արթուն սէրը ալեւոր վեհին՝ որ նստած իր անկիւնը՝ ինչպէս թեաքեկ արծիւ մը իր խանգարուած բոյնին վրայ, կը խոկայ լուռ:

Այդ տեղ է դեռ ինքը, այդ տեղ՝ ուր ապրեցաւ, ծրագրեց, գործեց եւ արդիւնաւորեց վեց տարիներ, հասկցնելու համար թէ իր իտէալին հրայրքն ունեցող գործիչը ինչպէս կրնայ ի չգոյէ ստեղծագործել՝ աչքը ապագային ակնկառոյց:

Կ'ապրի իր գործին մէջ. զի գործը, որ կը տէն ցարդ հոն, իրմէ վերջն ալ դեռ, կը դառնայ տակաւին շարժումովը՝ զոր ինք տուած էր անոր: Տարեկան հազար ոսկւոյ գումարի Մելգոնեան մշտնջենական նպաստը՝ զոր հանգուցեալ մեծ բարեբարը սահմանեց տարիներ առաջ, ապահովելու համար Հաստատութեան նիւթական գոյութեան գլխաւոր մասը, արդիւնքն է իր անմիատ եւ համոզիչ միջնորդութեան: Գիշ շատ կլոր գումարը, որ իր մահէն վերջ գտնուեցաւ դրամատանց մէջ յանուն Տանն Կիլիկիոյ, բոլորովին արդիւնքն է մասամբ իր խոհական եւ աշալուրջ տնտեսութեան, եւ մասամբ ամէն կողմ իր կատարած անդուլ դիմումներուն: Ընդհանուր ուղղութիւնը, գործը իր գիծերուն վրայ մեղմիկ քալեցնելու բայց ոտն առ ոտն անխափան յառաջացնելու ամփոփ եւ խոհեմ կերպը, որ, վերջապէս բուն տեղն է ըսել, այլ եւս ծալք եղած է այս Հաստատութեան վարչականութեան մէջ, իր ողւոյն դրոշմն ունին բովանդակօրէն: Ու չը մոռնանք, ի վերջոյ, որ թէեւ ամբերկահայ կարգ մը պատուական ազգասէրներու եւ ողբացեալ Շահէ արքեպիսկոպոսի սերտ աշխատանքին, բայց մասնաւոր իր մտածումին, իր առաջարկութեան եւ տնօրինութեանց հետեւանքովն

է որ կարելի եղած էր ունենալ թէև իբր առժամաբար, այսինքն հինգ տարւոյ համար միայն, բայց ապագայի նպաստաւոր կարելիութեանց անխախտ յոյսով միշտ, այս ընդարձակ վայրը՝ իր պարունակած շէնքերով միասին, իբր նստոց նժդեհական Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, Եկեղեցւոյ՝ Դպրանոցի՝ Միաբանական օթեանի՝ տպագրատան և այլ բոլոր իր սարօքն հանդերձ:

Իր վերջին մտասեռումն էր այս խնդրոյն, այսինքն այս գետնին վերջնական սեպհականացման գործին, ևս կարգադրութիւնը. հակառակ ծանր սուղին՝ որ կը ճնշէր իր վրայ իր պատուական գործակցին, Շահէ Սրբազանի աղիտաւոր վախճանովը, հակառակ բազում բարդութիւններուն՝ որոնք իր ծանրահոգ պաշտօնին բերմունքովը, իր շուրջը կը գոյաւորուէին շարունակ, ժողոված իր բոլոր ոյժերը, նուիրուած էր ան այդ հարցին բարեւոյ լուծումին. դիմումներ դէս ու դէն, առաջարկութիւններ ունէն ուղղութեամբ սկսած էր արդէն կատարել, և յուսալից միշտ՝ չյուսահատողի անվկանդ այն լաւատեսութեամբը, որ ճշմարիտ գործիչի ամենէն տուկուն ջիղն էր իր մէջ, վստահ էր թէ այդ մասին ևս պիտի ունենար գեղեցիկ յալոցութիւն մը, երբ մահը ամենէն բախտորոշ մէկ վայրկեանին կտրեց ահա յանկարծ իր կեանքին թելը...

Բոլոր այս վերջիշումներով եւ խոկումներով համազրաւուած այն օրը Անթիլիասի մէջ, կեցած իր աշխատասենեակի պատուհանին կշտին, մինչ կը դիտէին կեանքը՝ զոր ինքը ծաղկեցուցած էր հոն վարը և շուրջանակի, ամէնուս համար այլ ևս նուիրական այդ սրբավայրին մէջ, երբ ժառանգաւորները իրենց սև վերարկներով յասիկի հարուստ թուփերուն առջևէն անցնելով կ'երթային առաւօտեան պաշտամունքը ժամերգելու փոքրիկ տաճարին մէջ, հեռաւոր Հալէպէն, իր խաղաղութեան Հանգիստէն մինչև խղճիս խորը թնդած իր գոռ ձայնն էր որ կը զգայի թէ կը հարցնէր ինծի. «Ի՞նչ պիտի ըլլայ իմ գործը...»

Իր գործը... իր դազաղին առջև ուխտեցինք մենք արդէն ընել մեր բովանդակ կարելին որպէսզի շարունակուի ան, Բայց մենք ինքնին, այլապէս ծանրաբեռն՝ նման և առաւելագոյն հոգերով, ի՞նչ պիտի կարենայինք ընել միայնակ, առանց ուրիշներուն աջակցութեան:

Կը փափաքէին սրտազինս որ իր այդ հարցումը լսէին նաև շատեր, ազգին և Եկեղեցիին սիրովը լցուած ազգայիններ, իրենց սրտին մէջ, ու անարձագանգ չթողուին Կիլիկիոյ և ծերունի, սգաւոր և պատուական Հայրապետին կոչը այս մասին՝ իրենց խղճին մէջ:

Մարդ մը, իր կոշումին սրբութենէն և ազգին սէրէն հոգեգմայլած մարդ մը, գործ մը սկսած և կանգնած է այդ ափունքին վրայ, Եկեղեցւոյ և ժողովուրդին օգտին և փառքին. մարդիկ պէ՛տք է որ քանդեն այդ գործը: Պիտի հանդուրժե՞նք ազգովին որ աւերուի ան իսպառ իր սկզբնական անճումին մէջ՝ նոյն իսկ: Ու առանց այդ գետնին զման՝ ա՛յդ միայն պիտի ըլլար այդ գործին վախճանը:

Հալէպ գերեզմանն է իր մարմինին, լոյսերու մէջ այժմ տակաւին, զի կ'ապրի դեռ ինքը ասդին, իր գործին մէջ, Անթիլիաս. պիտի թոյլատրե՞նք մեր խղճին որ այս վերջինն ալ գերեզմանն ըլլայ իր հողին:

Հայ ժողովուրդ, լսեցէ՛ք ոչ թէ մեր՝ այլ իր ձայնը, և հասէ՛ք օգնութեան իր գործին:

ՎՐՕՆԱԿԱՆ

ՎԵՆԴԱՆԻ ՕՐԻՆԱԿԸ

(Յիւ. Ա. 1-11) (Բ. ԿՐԻ. ԶԿԵԻ ԱՌԱՋԱՌՈՐԱՅ)

Սօսքը մեռեալ տառ է, և պատուէրը կը շնորհ անազգեցիկ հրաման, եթէ կենդանի օրինակին ոգեւորութենէն չեն դարերկուքն ալ: Այսպէ՛ս է իրաց բոլոր կարգերուն, բայց մասնաւորաբար հոգեւոր կեանքի տնտեսութեան մէջ: Կրօնի պաշտօնեան, երբ մանաւանդ գլուխ կամ վերակացու է ստորագրականներու՝ որսնք իրմէ՛ պիտի ըստոնան իրենց ընթացքին եւ գործառնութեանց ուղղութիւնը, պէտք է ա՛յնպիսի դիրքի մը վրայ ճանչցուցած ըլլայ անոնց ինքզինքը՝ որ ամէնքն ալ զգան և համոզուած լինին թէ իր թելադրութիւնները կ'ենեն իրենց, ոչ թէ իրր պահանջը լոկ իր պաշտօնին, այլ իրրեւ իրենց և հանրութեան բարւոյն համար օգտակար դատուած անհրաժեշտութիւններ: Պէտք է յաւէտ վստահ ըլլան անոնք, նոյն տոնն, իր անկեղծութեան և արդարամտութեան մասին:

Գծուարին և անհանգուրժելիօրէն փափուկ կացութիւն արգարեւ. զի սէրը ո՛րքան ալ սուրբ լինի նուիրումի զգացումին մէջ, ու ճշմարտութեան լոյսը ո՛րչափ ալ մաքուր նշուէ՛ հաւատքին եւ կեանքին մէջ, անկարելի է որ կասկածը չսպրդի երբեմն դիմացինիդ սիրտէն ներս, քանի որ մարդ մըն է վերջապէս նա ևս, որ իրաւունք ունի անշուշտ խորհելու թէ մարդու մը հանդէպ է որ կը գտնուի ինքն ալ:

Ի՛նչ փոյթ, սակայն. ա՛յդ իսկ պէտք է զգրիւ մը լինի իր կոչումին գիտակցութիւնը ունեցող հոգեւորականին՝ միշտ աւելի կատարելութեան ձգտելու. իր շուրջինները, ո՛րքան ալ սկեպտիկ այսօր, ի վերջոյ պիտի համոզուին անվրէպ՝ իր դիտումներուն և իրենց սիրովը միայն եռացող իր հոգւոյն անստգիւտ բարութեան մասին:

Պիտի համոզուին անոնք այդ մասին, ո՛րքան աւելի տեսնեն զինքը անարատ՝ իր անձին, և պարկեշտ՝ իր կեանքին մէջ: Այս երկու յատկանիշները արգարեւ ամենէն ան-

սուտ փաստն են կրօնաւորին արժանաւորութեան:

Անձին անարատութիւնը սրբութիւնն է մտքին և սրտին՝ ի մի բան՝ հոգւոյն, որ բուն ազրիւնն է բոլոր շնորհներուն, որոնցմով պէտք է՝ աւելի ճիշդ՝ պարտի կարենալ զարգացուիլ Աստուծոյ ծառայութեան մարդը:

Միտքը. ամէն բանէ տուել ա՛ն պէտք է լինի մաքուր՝ մարդուն մէջ. պէտք է որ թիւր խորհուրդներ օգ գտնեն հոն՝ չունչ առնելու, կամ հող՝ արմատ բռնելու համար անոր մէջ. իսկ սիրտը այնպէս պէտք է գործարանաւորուած ըլլայ բարոյապէս՝ որ չկարենայ տաքցնել իր մէջ չարազգաց բերումներ:

Այսպիսի անձ՝ այսինքն հոգի՝ ունեցող եկեղեցւոյ պաշտօնէին կեանքին ճառագայթումը կ'ըլլայ նախ իր տունը, իր ամենէն ներքին շրջանակը, և յետոյ ընկերային այն ոլորտը, որ դաշտն է իր հանրային գործունեութեան, իր հասարակութիւնը:

Իր ընտանիքին մէջ ան պէտք է ակնբերօրէն ի հանդէս բերէ ամուսնական պարկեշտութիւն. «Միոյ կնոջ այր», առաքելական բացատրութիւնը, թէ և ըստ ինքեան պատմական ակնարկութիւն՝ նախկին դարերու կանամբի հոգեւորականներու կենցաղակերպին, իր սեղմ ձեռն մէջ այսօր ալ դեռ կրնայ անոնց և ամէնուն համար նըշանակել սերտօրէն զգաստ կեանքի այն կանոնը, որ ամենէն առաջ իրենցը պէտք է ըլլայ, կարենալ լինելու համար իրենց ժողովուրդինը:

Յետոյ, ամուսնական պարկեշտութեան առընթեր, և անոր իբրեւ անմիջական պտուղ նոյն իսկ, պէտք է տեսնուի ծնողական բարեբարոյութիւնը. այդ շնորհը պէտք է ցուցնեն քահանային զաւակները՝ հաւատքի կրթութեամբ դաստիարակուած այնպիսի կեանքի մը մէջ, ուր ոչ ոք կարենայ մատնանիշ ընել անառակ վարքի կամ անհնազանդ բարքի թերութիւններ: Հակառակը՝ ամենէն ցաւալի զայնթաղութիւնը պիտի ըլլար ոչ միայն հոգեւորականին՝ այն նաեւ անոր ներկայացուցած կրօնին բարոյակա-նին տեսակէտով:

Գալով իր պաշտօնին հասարակական կերպրութեան շրջանակին, հոն է որ ա-

ւելի տեւական ուժգնութեամբ և լայնագոյն տարողութեան մը մէջ պիտի փայլին եկեղեցականին հոգեկան բարեմասնութիւնները: Իր ճանապարհորդութիւնը, սրտի և մտքի իր անբռնութիւնը պէտք է արտայայտուին այն տեղ, աշխուրջ շրջանայեցութեան, ներողամիտ քաղցրութեան, բարեացակամ հաղորդականութեան, հեղութեան եւ առատածեռն անձնութիւններու այնպիսի գործերով, որոնք իր վրայ ամէն վայրկեան և ամէնուն ցոյց տան ծառայական յաւէտ պատրաստակամ, խոնարհ, անկաշառ, աշխուհեւ պարկեշտ նկարագրի մը մարմնացումը, իրրեւ հետեւանք՝ իր քարոզած ճշմարտութեան վերաբերմամբ ունեցած իր հաւատքին անկեղծութեան:

Այդ կերպով է որ Աւետարանի պաշտօնեան պիտի յաջողի ուղղութեան մէջ պահել իր հոգեւոր հօտը. իր յորդորները շինել պիտի ըլլան սիրտերուն համար, ու իր օսաստերը պիտի կարենան կարգի բերել մօլորած հոգիները, որովհետեւ բառերէ աւելի կենդանի օրինակովն է որ պիտի խօսի ան ամէնուն:

Թ. Ե. Կ.

ՃԵՄԱՐԻՏ ԼԱՅՆԱՌՈՂՈՒԹԻՒՆ

(Հոռ. Ժ. Գ. 11 - Ժ. Գ. 25) (ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ)

Կրօնական իրաց կարգին մէջ մանաւանդ, որպէսզի մարդ կարենայ, էականը և երկրորդականը իրարմէ զանազանելով հանդերձ, արդարութիւն ընել երկուքին ալ, այսինքն չուրանալ ո՛չ մէկին և ո՛չ միւսին արժէքը, հարկ է որ չմոռնայ երբեք թէ անցաւոր է աշխարհ, թէ մահը մեր մէջ մի քալափոխին կրնայ գտնել հոն զմեզ, և թէ չարժեք, հետեւաբար, մեր օրերը գրաւել խնդիրներով՝ որոնք կրնան սին վէճերու միայն յանգիլ ի վերջոյ. մէկ խօսքով, չմտազբազուիլ փոքրիկութիւններով, բարձրագոյն նպատակներու միայն արժանի համարելով կեանքը:

Բայց ասիկա գեղինն է միայն. անոր վրայ կառուցանելու համար բուն շէնքը՝ կարեւոր է ի նկատի ունենալ կարգ մը ըս-

կզբունքներ, որոնց մէջ՝ թերեւս դիտաւորաբար՝ հետեւեալները:

Կրօնքին մէջ, անտարակոյս, ձեռք չէ էականը. այնպէս որ առաջին նպատածքով՝ պիտի փորձուէինք կարծես խորհելու թէ անոնք որ շատ կարեւորութիւն կուտան ձեռք կամ ծէսին, հաւատքի մէջ տկարներ են, որովհետեւ իրենց կրօնական համոզումներուն համար պէտք կը զգան արտաքին նեցուկներու. բայց ասիկա մտախաբութիւն մ'է յաճախ: Անշուշտ հոգեկանն է էականը. այսինքն հոգին է որ պիտի առաջնորդէ. բայց յառաջացումը պիտի կատարուի նիւթական դիժերու վրայէն. և այս՝ քանի որ մարմինի կեանքը կ'ապրին: Առաջինը անհրաժեշտ է, բայց երկրորդը (ծէսը) ոչ խոտելի, ցորչած չի չփոթելի մտահաւատութեան հետ:

Արարքը չէ որ կը շինէ գործի մը արժէքը, այլ ոգին՝ նպատակը՝ որ ծնունդ կուտայ անոր: Ամէն ոք, ի՛նչ տեսակէտի ալ պատկանի, կեանքի ի՛նչ կերպ ալ պարտադրած ըլլայ ինքզինքին, պէտք է որ ամենէն առաջ ունենայ իր համոզումը, որպէսզի, ըստ այնմ, խղճատութեամբ կատարէ իր գործը: Ու այնքան աւելի խղճատութեամբ կը կատարուի գործ մը, որքան աւելի անոր ծնունդ տուող նպատակը արդիւնքն ըլլայ կրօնական շարժառիթի մը, աւելի ընդլայնօրէն՝ ճշմարտութեան և արդարութեան համաձայն գործելու համոզումի մը: Մեր կեանքին ամենէն անշաւան գործերն անգամ պէտք է կապուած ըլլան սուրբ մտածումի մը. ա՛յս է կարեւորը. առանց անոր՝ բան մը չեն արժեք ո՛չ հանգիստնոր բարեպաշտութեանց չքեղաշուք պերճանքը և ո՛չ ամենափայլուն իմաստութեան մը թովիչ գեղեցիկութիւնները:

Ոչինչ մեկի, ամէն ինչ Աստուծոյ համար: Տէրեր չենք մենք այս կեանքին մէջ, այլ պատասխանատու ծառաներ միայն, որ պարտաւոր ենք հաշիւ տալ մեր ամէն մէկ գործին, մեր մէջ մի վայրկեանին համար: Եթէ կարենանք մեր գործառնութեանց մէջ մեզի անշեղ կանոն ընել այս սկզբունքը, մեր ձեռքը կ'ունենանք լայնախոհութեան բանալին, էականներուն և երկրորդականներուն մէջէն մեր գնացքին ճամբայ բանալու կերպն ու կանոնը: Այս սկզբունքին շնորհիւ է որ քրիստոնէութեան մէջ կարելի

եղած է բարոյականը ներդաշնակել կրօնական ճշմարտութեան հետ, ու թող տալ որ մարդիկ, երբեմն, Աստուծոյ հոգւով, օրէնքին լոյսին մէջ իրե՛նք իսկ գտնեն կարգ մը պարագաները բացատրելու եղանակը: Ձի երբ բարոյական վարդապետութիւն մը շատ մխրճի ամենայեւորին մանրամասնութեանց մէջ, վտանգ կայ որ յաճախ խրի անխմտութեանց խորը:

Ա՛յդ ճամբէն պէտք է ստէպ անցնի սիրտը՝ հասնելու համար զիջողութեան, գործնականին մէջ ամենէն քրիստոնէական այս սկզբունքին, որ լայնախոհութեան հիմնապայմաններէն մին է: Զիջումը, իր աղանդական առումին մէջ, յարգանք է դիմացինին համողումին: Տեղի կուտամ, երբ կը նկատեմ թէ համողումի մը ազդեցութեան տակ է որ կը գործէ ան ե ո՛չ թէ կիրքէ մղուած. ու այս՝ առժամապէս նախ, այսինքն մինչև որ բացատրութիւնը լուսաբանէ հարցը, կա՛մ ինծի ե կա՛մ իրեն հասկցնելով թէ սխալ է իբր յինարան ծառայող համոզումի մը հիմը: Ու յետոյ, երբ այդ կերպով ալ չստացուիր ցանկացուած արդիւնքը, քանի որ երկրորդական կէտի

մը չուրջ կը դառնայ հարցը՝ կը նախընտրեմ զոհել նոյն իսկ ազատութիւնս: Վասն զի լաւագոյն է ծառայել խաղաղութեան, որ քրիստոնէական բարոյականին ամենէն յարգելի նպատակներէն մին է, քան թէ՝ նուազ էական խնդրոյ մը համար՝ ազատութեանս ետապաշտ կիրարկութեամբը պատճառ դառնալ իր հաւատքն ու բարոյականը այդ կարգի խնդրոյ մը կապած գտնուող եղբոր մը կորուստին:

Գործերուն բարոյականութիւնը կը կըշուռի, կը կրկնենք, անոնց ծնունդ տուող համոզումներուն կրօնական տարողութեան չափովը. այս է լայնախոհութեան բուն հիմը: Իսկ զայն գործադրելու, այսինքն ճշմարտապէս լայնախոհ ոգւով վարուելու գերազանց կերպն է՝ կարեւոր, ի հարկին, զոհել նոյն իսկ անձին ազատութիւնը, քան թէ տեղի տալ վրդովիչ հասկացողութեանց:

Անհատները, հասարակութիւնները, դաւանանքները բաժնող հաւատքի ե կարգի, երկրորդական հարցերու տարակարծութեանէն յառաջացած անպատեհութեանց դէմ ի՛նչ քան զայս շատ աւելի գեղեցիկ ե ապահով միջոց:

Թ. Ե. Գ.

ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ԲԱԲԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

— ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ —

(ԹՈՒԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՆՕՐԵՐ)

Բարգէն Մ. Վարդապետ ճանչցուած ե համակրանքով մատնանշուած անուն մըն էր արդէն, 1900 էն ալ առաջ, Ազգին գրեթէ ընդհանրութեան մէջ. այդ անունը հիմակ ե հետզհետէ աւելի սկսաւ շնչառել: Մուշէ կալանաւոր գալէն վերջը, ո՛չ միայն Հայաստանէն դարձողի ե հայկական Տառապանքին հետ հոգեին հաղորդուածի իր հանգամանքին պատճառաւ, որ, վերջապէս, առաւելութիւն մըն էր այդ շրջանին մանաւանդ, այլ որովհետեւ պարագաները յետ այնու աւելի թոյլատու եղան երևան բերելու համար իր մէջ իր բուն արժանիքները: Դեռ նոր հասած էր Կ. Պոլիս, երբ Տրա-

պիզոնցիք ընտրեցին զինքն Առաջնորդ 1900ին. բայց կառավարութեան առջև իր գրութիւնն ա՛յնքան փափուկ էր այդ միջոցին որ պատրիարքարանը չխորհեցաւ նոյն իսկ վաւերացումի առաջարկ ներկայացնել: Այդ վիճակը շարունակուեցաւ իրեն համար մինչև 1906, երբ Մարաշէն ընտրուեցաւ. բայց հակառակ որ պատրիարքարանի դիմումը Սահակ կաթողիկոսէ ևս երկրորդուած էր Բ. Դրան առջև, հաստատումի գործը միաց անհետեանք:

Նրեք տարիներ առաջ, 1904ի վերջերը, երբ Նիդիւն եպիսկոպոս Դուրեան կը ստիպուէր ընդունել Ձմիւռնիոյ առաջնոր-

գուժեան պաշտօնը, Օրմանեան պատրիարք խորհրդ էր իրեն յանձնել Արմաշու Դպրեւ-վանոց փոխ-վանահայրութիւնը, պաշտօն՝ որուն համար պէտք պիտի չլլար կայս. վաւերացման. բայց այն ատեն ևս, խնաւակալութիւնը իմաստութիւն չէր համարած պետութեան աշքին կասկածելի երեւցած հոգեորականի մը կարգուիլը իրրեւ վերատեսուչ Հաստատութեան մը, որուն կոչու-մին մէկ մասն էր նաեւ գաւառաց Առաջ-նորդներու կրթութեան գործը:

Այսպէս կամ այնպէս, Բարգէն պար-տաւորեցաւ մայրաքաղաքին մէջ անցընել իր երիտասարդական տարիքի ամենէն հա-սուն շրջանը, իբր իննամեակ մը (1901-1909), երբ, թուրք սահմանադրութեան վերահսակութիւնէ վերջ, ա'լ արգելք պիտի չունենար ընդունելու համար Անկիւրիոյ առաջնորդութիւնը:

Ինը տարիներու այդ շրջանը, պէտք է խոստովանիլ, իր կեանքին ամենէն յիշա-տակելի մասերէն մին եղաւ, իրրեւ ժամա-նակամիջց մը, ուր անիկա պատենութիւն ունեցաւ լուրջ և ամփոփ նուիրումով մշա-կելու և արդիւնաւորելու իր մտաւորական կարողութիւնները:

Որովհետեւ Մուշէ վերադարձէն յետոյ ճշդ հսկողութեամբ կը մնար Կ. Պոլիս, ինչպէս ինքն իսկ կը ստորագծէ իր ինքնա-գիծ կենսագրութեան մէջ, պէտք եղաւ գէթ աստե՛ն մը որ իր բնակութիւնը հաստատէ գրացնութեանը մէջ պատրիարքին, իբրեւ անոր անմիջական երաշխաւորութեան ներքեւ. այս պատճառաւ քարոզիչ նշանակուեցաւ Բերայի Ս. Յարութեան՝ ի Թաքսիմ, ուր էր նաեւ Օրմանեան Սրբազանի տունը. այդ նկատումով էր նաեւ որ այդ միջոցին ստանձնեց նորատունիկեանի ընտանեաց հա-յերէնի և կրօնի առտնին ուսուցչութիւնը. ու այսպէս, թէ՛ ևս տեսակ մը մեկուսացու-մի, բայց նոյն ժամանակի Հայ բարձր դա-սուն այդ շրջանակին մէջ ազգային և մտա-ւորական կարեւոր դէմքերու հետ յաճախեալ յարաբերութեանց շնորհիւ հանգուրժելի կեանք մը ապրեցաւ մինչև 1901-ի Սեպ-տեմբերի սկիզբները, առանց երեւելու լրա-գրութեան մէջ, առանց դասախօսելու, գո-հանալով միայն քարոզչական պարտակա-նութեան կատարմամբ:

Այդ թուականին, երբ կարելի էր այլեւս

իր մասին պետական ուշադրութիւնը բա-ւական մեղմացած համարել, պատրիար-քարանը նոյն պաշտօնով փոխարեց զինքը Դաւթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, իբրեւ քարոզիչ և նոյն ատեն Տեսուչ Դաւթիոյ Մատենադարանին:

Բարգէն վրդ. իր ճաշակին և յարմա-րութիւններուն համար շատ աւելի նպաս-տաւոր միջավայր մը կ'ունենար այստեղ: Իրրեւ եկեղեցի, Պոլսոյ հայ սրբավայրերուն ամենէն վաղնջականը, ա'լ պատական դար-ձած աւանդութիւններով ամենէն սրտա-զրաւը, Ս. Լուսաւորիչ՝ իր եռասունհար ժա-մերովը, երեք ևս փոքրիկ մատուռներովը, բակին մէջընդմէջ նրբանցքներովը, յարա-կից ժամատան մեծ ու փոքր խցիկներով և շէնքերովը, բազմաթիւ խաչքարերովը, եւ կեղեցական դրչազարդ մատենաներովը և գե-ղարուեստական կահ ու կազմածոյն ու ըզ-գեստներովը, պատրիարքներու եւ քարե-րարներու տապանաքար շիրիմներովը, և այլն, հայկական հին վանքի մը խորհրդա-զգած միջնորդոսն ունէր արդէն:

Շատ կանուխէն, այսինքն երբ Կ. Պոլիս դեռ չէր առնուած թուրքերէն, ԺԻ. դարու վերջերէն, ան կը թուի կեդրոն եղած ըլլալ ուխտաւորական շարժումի մը, որ ժամանա-կին հետ միշտ աւելի աճեցաւ մասնաւորապէս Ամենափրկեան Մատուռին ձգողականու-թեամբը: Բարեպաշտական այդ եռուզեոյն մէջ հետզհետէ աչքառու դարձած էր հոն քարոզչական բեմը. իրենց ժամանակին ա-մենէն նշանաւոր խօսողները այնտեղ փայ-լեցուցեր էին իրենց հոստորական տաղան-ըը, ամէն հինգաբարձի մայրաքաղաքին բո-լոր կողմերէն հոն խոնուող հաւատացեալ-ներու բազմութեան առջև: Ատոնցմէ՛ հի-ներէն՝ կարելի է յիշել Կոլոտ Յովհաննէս պատրիարք, իրենց թուականին ամենէն հմուտ հոգեւորականները. իրենցմէ՛ քիչ մը կանուխ, ԺԻ. դարու վերջին տարիներուն, Միխիթար Սեբաստացի, որ Հուովմէականութեան յա-րելէ ոչ շատ առաջ, հոն խօսեր էր քանիցս. յետոյ, Սիրիական և Վարժապետեան, որոնք ջերմ ոգեւորութիւն յառաջ բերած էին անոր կամարներուն տակ, և, ի վերջոյ, Օրմա-նեան վրդ., որ, Մայրենի եկեղեցւոյ գրկը դառնալէն անմիջապէս վերջ, ներսէս պա-տրիարքէ կարգուած էր քարոզիչ Ս. Լուս-

սաւորչի, և մօտ տարի մը իր հզօր շունչին խանդավառութեամբը աւելի բարձրացուցած ուխտաւորական կեանքը:

Իբր ընտանեան հետեւանք այդ ամէնուն, և անոնց հետ զուգահեռաբար, հոն կազմուած էր ազգային, մտաւորական և կրթական կեանքի վառարան մը, հաւասար Կ. Պոլսոյ կարգ մը ուրիշ եկեղեցիներուն շուրջը եղածին, ու երբեմն նոյն իսկ աւելի քան անոնք: Կոլոտի օրերէն այս հանգամանքը կը նկատուի արդէն անոր վրայ: Այս իրապէս մեծ պատրիարքը, որ ի վերջոյ հոն ունեցաւ նաեւ իր գերեզմանը, իր կազմակերպական յորդեանդին և ուսումնական ջանադրութեանց կեդրոն ըրած էր զայն իր մտքով պաշտօնավարութեան միջոցին: Անիկա հոն փոխադրած էր Մայր Եկեղեցւոյ իր հարուստ մատենադարանը, որուն վրայ յետոյ աւելցած էր նաեւ Նալբանիւնը. հոն էր հաւանաբար նաեւ որ կ'աշխատէր Կոլոտեան դպրոցին մեծ վաստակաւորը, Ղուկաս վրդ. Խարբըրդի, աշակերտներու կարեւոր թուով խումբի մը հետ անդադար թարգմանելով, ընդօրինակելով և ժամանակին եկեղեցականաց կրթութեան և ժողովուրդին կրօնական դաստիարակութեան համար ընելով ինչ որ դարուն ոգին և պահանջները կը հարկադրէին: Այդ տեղ անշուշտ, անցքի եւ կանդիպման դիւրութիւններով իբրեւ ամենէն աւելի բանուկ կէտ, կը կատարուէին հոգեւորականներու եւ աշխարհականներու գումարումներ. որոնց հետեւողութեամբ էր նաեւ որ յետոյ, 1867էն վերջ, Ազգ. Սահմանադրութենէն ետքը, հաստատուեցաւ Երեսփոխանական Խորհրդարան, ու քիչ վերջը, Քրիստոսոսուր Ղազարոսեանի զխաւորութեամբ, գաւառացի հայ պանդուխտներու կրթակնօրեայ և գիշերային դպրատունը, ազգ. նախակրթարանը, և ընդդիմադիր խմբակին Օճախը, ու ամենէն վերջ՝ Կեղորնակսը, Կ. Պոլսոյ հայկական կրթութեան ուսումնապէս եւ ազգային ոգւով բարձրագոյն վարժարանը, որ իր մեծածախս պիւտնէին գրեթէ ամբողջ սնունդը կը ստանար Ս. Լուսաւորչի ուխտաւորութեան հասոյթներէն:

Երբ Բարգէն վրդ. կարգուեցաւ քարուղիէ այս սրբավայրին, հոն կը պահսէին միայն Խորհրդարանը եւ Օճախը. զի կային ուխտաւորութիւնը, թերեւ աւելի մեծ թա-

փով, նախակրթարանն ու կեդրոնականը և վարչական զանազան ժողովներու հաւաքավայրը, բայց մանաւանդ այլ ևս պատմութեան ժառանգութիւն գարձած յիշատակներու մթնոլորտը: Իրեն համար յաւէտ գրաւիչ հրապոյր մը կար այդ բոլորին մէջ: Զինքը մտեռանգող ամենէն անոյշ զգացումն էր սակայն Կոլոտի նման մեծանուն, հոգեզօն և ճշգրիտ մտնող գաղափարին հետ հանապազօրդ հաղորդութիւնը այդ տեղ: Խորունկ եղած էր այդ սքանչելի մարդուն զգեցցութիւնը իր վրայ: Անոր մէջ կը տեսնէր շատ իրաւամբ մին՝ մեր պատմութեան կարգ մը դարապուստներ լուսաւորող այն մեծութիւններէն, զորս երկինք պարգեւած են միշտ մեղի ազգային պէտքերու աղաղակող անհրաժեշտութեանց միջոցին, իբրեւ կազմակերպող գլուխ ամենէն առաջ, իբրեւ աստուածաբան և գիտուն միտք, իբրեւ ընտիր բեմքասաց, իբրեւ եւամեծ վարդապետ, իբրեւ կրողի և խմաստուն ջատագով ազգ. եկեղեցւոյ կարգաց և սկզբունքներու, իրեն համար՝ իր դարուն Տաթնացին էր ան. պատմական ուսուցիչ մը և շնորհալի առաջնորդ մը, որ իր պատրիարքական պաշտօնին բովանդակ շուքն ու հմայքը կը կիրարկէր իր վարդապետական արժէքներուն արդիւնաւորմանը համար: Այս պատմաւաւ անոր հանգէպ իր հիացումէն տարուած, կարծես իրեն համար, իր ապագայ գործունէութեան տեսակէտով, տիպար մըն է որ այդ օրերէն սկսած էր պաշտել անոր անուն մէջ: Անոր խոկումը տեսակ մը ներշնչումի աղբիւր է իրեն համար՝ իր երեսուն երեք տարիներու երիտասարդութեան ամենէն վառ հասակին. ծովափնեայ գէջ և մութ փողոցներու սեղմուած այդ անկիւնը մեկուսացած օրերուն, անոր օրինակովը զօրանալու և պատրաստուելու համար իր հեռաւոր ծրագիրներուն մշակումին: Անոր ուսումնասիրութեան նուիրուած էջերէն արեւ իր քանի մը բառերը. «Ես՝ որ բռնադատուած իմ պանդուխտութեան կարեւոր մէկ մասը Ս. Լուսաւորչի մէջ կը մաշեցնեմ՝ տա՛մուկ, տնարեւ սննեակի մը մէջ, պատառ մը կապոյտ կամ մաւայ երկնիքով. սննեակ մը, որուն լուծութիւնը կը խռովի վերէն դասարանի մը ամենունեայ երկրաշարժով, և վարէն՝ օթէլի ջրհանին ընդհատ աղմուկնե-

բով, իսկ գուրաշն գտնաբերված զգուշ-
լիներով և աւելի գուրաշն յարեմաք,
փոքրացալին երաժշտութեան ազգային-
բով, այդ սենեակին մէջ՝ նախորւած գրչի
և գրչի սիրական, մուշկան զարդաւորաւ,
որոնք շատ ուշ կը զգացնեն ինձ ծանկերս
ու կուշտերս առջեւ ուրախն աներեւի
ծանրութիւնը, պահպանութեան մաշումը
կ'օժնէ Կոլտաի յաւընքն ալ թէ՛ իրեն
նախորւած այս էջերով և թէ՛ իրեն պէս
մշտաբոս ու յորդ քարոզիչներ լոտմ աս
բեմով:

Ու արդարեւ, անոր օրինակէն ներգոր-
ծուած, խօսեցաւ միշտ, գրեց ու գործեց
շարունակ անոր շիրմին աւընքեր, ութ առ-
րիներ (1900—1907):

Խօսեցաւ. իր օրով ևս չլսեց բնաւ Ս.
Լուսաւորչի բեմը. Ժողովուրդը, բարեպաշտ
և մաւաւորական հաւատացեալներ, որոնք
ամէն հինգշաբթի գունդագունդ կը դիմէին
դէպի հինաւորեց տաճարը, հեռակեան աւելի
կը գրաւուէին անոր կենդանի և շինիլ խոր-
հրդածութիւններէն, որոնց մէջ աւետարա-
նական ոգին, բարոյական կեանքի փորձա-
նութիւնը և օրուան ընկերային հարցերէն
և դէպքերէն եզրակացուած կենցաղագուշտ
գիտելիքներ ուսեղ շունչով և շեշտուած
առողջամտութեամբ սիրտերուն կը փոխա-
ցէին համոզուած հոգիի մը անկեղծութիւնը:
Բարեկամ չէր բնաւ հոռոտորական շքեղան-
քի և գրական նրբութեանց. ու աւելի առ-
ուաւելութիւն մըն էր նոյն իսկ իր վրայ-
պարզ, յստակ, ապաւորիչ, իր լեզուէն լաւ
գիտցողի մը մաքուր հայերէնով արտա-
սանուած իր տեսութիւնները արդարեւ ճիշ-
դեմորոգ հայեցողութիւններնու կազգու-
րումը կուտային իրենց հաւատքին մէջ
սկիարացածներու, և մաւաւորական վայելք
աւետարանի ճաշակը իսպառ չկորսնցուցած
միտքերու:

Միայն հինգշաբթի օրերը Ղալաթիա քա-
րողելու ստիպուած լինելը դիւրութիւն կու
տար իրեն՝ կիրակի և տօնական ուրիշ տար-
բեր եկեղեցիներու մէջ խօսելու, մասնա-
ւորաբար այն տեղերը ուր յատուկ քա-
րողիչ չէր գտնուեր: Այսպէս, յաճախ Բե-
րայի Ս. Յարութիւն կամ Բանկալթի կամ
Վոսփորի գանազան արուարձաններու մէջ,
և քիչ մը ամէն տեղ, Ղալաթիոյ մէջ ճանչ-
ցւած ըլլալով իւր ընտիր քարողիչ՝ ամէն

թուրէր նա զիմզ ախաւարներուն մե-
ջացաւ: Ար ասիմներով խառն իր քարոզ-
ներն է որ զրի առնելով դատարկեց
1904ին, 384 էջերէր քաղկացած ութամս
Ս. Կաթող մը երեսուն և եօթը քարոզ-
ներու արտաւարութեամբ:

Շահեկան է արդարեւ այդ Կաթողը, ոչ
միայն իրեն քարոզներու շարք մը այլ նոյն
իսկ իրեն ընթերցումի մասեան: Ինչն իսկ
կ'ըսէր թէ խօսելէն վերջն է որ կը զրէ իր
քարոզները. այդ ապաւորութիւնն է որ այդ
զրիքէն պիտի ընդունէր գոյն կարգացողը:
Չափաւոր, հշտաւոր, շարդարական չլը-
կուշտով արդարուած փոքիւն նախադա-
տութիւններ չէ որ պիտի գտնէք նա, ինչ-
պէս զոր օրինակ իր իսկ միւս գրուածք-
ներուն մէջ, այլ փնդանի խօսքին թարմ
շունչը գեւ իրենց վրայ մասնաւոր, բե-
մէն իջնելէն քիչ ետքը զրի առնուած, ու
բնեք՝ տարու Կաթող խօսանք բան մը ունին
իրենց մէջ: Չինքը մօտէն նանչողը անոնց
մէջ՝ այդ էջերուն մէջ զինքը պիտի տեսնէ,
կրօնքի, հաւատքի, բարոյականի, եկե-
ղեցական բարեպաշտութեան, ընկերային
կեանքի և կարգի վայելութեանց մասին իր
ունեցած մաւաւորութիւններովը, մերթ իւր-
պիտ՝ մերթ միտմիտ, բայց միշտ անկեղծ
և նախանձախնդիր նկարագրին իր բովան-
գակ անկեղծութեամբը, որ քարողին մե-
ծագոյն արժէքներէն մին է անտարակոյս:

Այս Կաթողին՝ խօսուած քարողներու
միայն ամփոփում մը լինելը կը հասկցուի
նաեւ անկէ, որ չէ ուզած կամ չէ կրցած
ի լոյս ընծայել յաջորդ Կաթողներ եւս,
զորոքերու հեռակեան կուտակուող յաճա-
խութեան մէջ հաւատարար ժամանակ չի
գտնելով միշտ զրի առնելու իր միւս խօ-
սածներն ալ: Հակառակ պարագային, ան-
կարելի պիտի ըլլար որ հրատարակութեան
առաւ չըլլար զանոնք ալ:

(Շարունակի)

(5)

Գ.



ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

«ՑՆԾԱՆ ԹԱԲՈՐ ԵՒ ՀԵՐՄՈՆ...»



Լոյսի շող մը կարծես մէկէն միւսը կ'անցնի,
 Զոյգ սարերն, այգին մէջ, կը դիտեն մինչ զիրար.
 Մին՝ կանգուն գլուխն ունի ապարօտ մը ձիւնի,
 Յողէ՝ միւսը՝ հողին ճակ բազմած է խոնարհ:

Փայլակին հրպանցքէն ըստիներ ունի մին՝
 Հըսկայի ուտերուն աւ վիզին վրայ անեղ.
 Լուսինէն կ'առնէ միւսը պըսպղանքն եղեամբին՝
 Զոր արեւն կը փոխէ արցունքի սըրսազեղ:

Անվեհներ ո՛յժն է մին, պողպատէ, ամրակուռ,
 Հաւասքի հրահալին մէջ ձուլուած Սինայի.
 Միւսը՝ Սէրն անուշակ, թըրթռուն, գողցըր, մաքուր,
 Որ դէպի արիւնոտ Գողգոթան կը նայի:

Բայց լոյսին մէջէն ջինջ, առջուան զեփիւռն երբ,
 Բոյրէ բոյր շրնչելով՝ հընչեցնէ պահ մ'իր երգն,
 Երկուքն ալ, խայտալով բերկրութեամբ այլակերպ,
 Կը ջընժան, մոռցած ան՝ իր սիգանքն, աս՝ իր վէրքն:

Թ.



կոթողի մը պատկերը կը ներկայացնէ և հետեւաբար արժանի է վարձատրութեան:

Մեր Հայաստան աշխարհը ակազմուէ շտեմարան մ'է բանահաւաքութեան. չկայ երկիր մը որ այնքան առատ ըլլայ նոյն նիւթերով որքան մեր երկիրը. անոր օրհնուած հողերուն խորն ու վերը, մերթ քարերուն վրայ քանդակեալ գրերով ու զարգերով, մերթ պարիսպներու վրայ դարձրուած արձանագրութիւններու և յիշատակարաններու ճոխութիւնը կը պարունակեն բանահաւաքութեան կարեւոր նիւթեր: Այն ամէն ժողովուրդներ որ կոխտած են Հայոց երկիրը. աւարք մը թողած են հոն, և ժողովուրդը՝ դարեւու թաւալման ընթացքին՝ հեքերով և Ֆոլքլորով իր ընկերային կյանքին հետ ձուլած է քնութեան երևոյթներու կործանումները. բազմաթիւ պատերազմներ, հրդեհներ, ուղղումներ՝ Հռոմէացեաց, Պարսից, Ռիւսկացեաց, Արաբներու և Սէլջուքներու և այլոց արշաւանքը ու մեր երկրէն անց ու զարձը կերտած են այլազան վէպեր: Մեր աշխարհի խախտարարական տուններուն՝ ընդդէմ իրարու՝ տիրապետելու շարժումները ժողովրդեան մէջ յինձն են բազմազան հեքերովներու առատութիւն մը. բանահաւաքութիւնը մեծ դեր մը կատարած է և պիտի կատարէ նիւթերուն և գէպքերուն տալու համար պիտի ունէ և իրական պատմութեան մը:

Հայ բանահաւաքութիւնը մշակած են թէ Արեւելեան և թէ Արեւմտեան Հայք՝ առաջինները աւելի ճոխ արդիւնքներ տուած են: Այս կարեւոր ձեռնարկը անոնք սկսած են 1840-ին, և ռաւիլիոյսը իր նկատուի իմին (Միխայիլ Յովսէփեան Ջուլիպեցի)՝ լեզարեան ձեմարանի Արեւելեան չորս ծիւներէն մին, անոր գործերը բաշխելով են Հայ Պատմութիւնը և Հայ Մշակույթը օտարներուն ծանօթանցնելու համար իր կատարած առեւտրէն և ֆրանսերէն մեր պատմական գրոց թարգմանութիւնները մեծ կշիռ ունեցած են: Պիտի յիշեմ միայն անոր բանահաւաքութեամբ հրատարակեալ գործերը. «Վէպիք ձեռնոյն Հայաստանի», «Մովսէս Խոսրովացիի և Հայոց իմն վիպեր», «Հնախոսութիւնի ի վերայ Հայկական ձեռնարկներով» թարգմանուած Արմաշի մէջ Յովսէփեան Պատմութի ճէրգերէն: Իմինեան հատատարած է (1848-1855) նաև Ազգագրական նիւթերու տպագրութեան գրամատիւլիս մը, որուն կանոնագրութիւնը և Յանձնաժողովը մը գոյութիւն ունեցած են նոյն թուականներուն. Իմին ունեցած է նաև Կոտակափի մը Ազգագրութեան և բանահաւաքութեան ճիւղերուն համար: Այս անձեւն տպերուն մէջ չէ կարելի ըսել անդակել յիշեալ մեծատաղանդ և անդուգական մատենագիրն ըստ ըստի երկերը:

Բանահաւաքութեան ծագումէն կէս դարու միջոց, նիւթերը կը հաւաքուէին առանց օ ո և է գիտական ղեկավարութեան և ծրագրի, բանահաւաքները շատ անգամ չէին ըմբռնող հաւաքելի նիւթերու կարեւորութիւնն ու գիտական արժէքը, մոռնալով կարեւորը և ընդհակառակը հետապնդելով աննշանը և երկրորդականը. հաւաք-

ման գործին մէջ բացակայ կ'ըլլար աշխատանքի բաժանումը կամ գաղափարումը շատ տեղերու և աւարակներուն, որովհետև գոյութիւն ունէին կանոնաւոր գործունէութիւն և հետազոտական նպատակներ, որոնց մէջ առաւել չափով կը գտուէին ճիշդը և հաւատարմութիւնը, քիչ չափով միայն նկատի առնուած տնտեսական կենցաղը և իրաւական սովորութիւնները:

Անցեալ դարու 80-ական թուականներուն վերջերը Հայ բանահաւաքութեան մէջ կը նկատուի որով չափով գիտական ուղիներու մերձեցումը:

Բրձր. Գրիգոր Խալաթեանի կազմած ու հրատարակած (1887) «Ծրագիր Հայ Ազգագրութեան և Ազգային Իրաւագրամական սովորութիւններուն» զիջքը այս գործին մէջ մեծ փոփոխութիւններ յառաջ բերաւ, որով Հայ Ազգագրութեան գիտական նշանակութիւնը բարձրացաւ: Նախորդ շրջանի հետ բաղդատմամբ կ'սկսի աւելի բեղմնաւոր բանահաւաքութիւն մը: Ազգագրութեան գրեթէ բոլոր ճիւղերուն մէջ լայն կը տեսնուի ոչ միայն հում և յիշատակելի Գրիգոր Խալաթեանի, Ս. Եղիազարեանի և Երուսաղէ լաւանքանի ուսումնասիրական աշխատութիւնները:

Բացի մի քանի առանձին զիջքերով հրատարակուած Ազգագրական հաւաքածոներէ եւ պարբերական մատուցան մէջ (ԱՐՄԱՅ, ԱՐՄԲ, ԱՐՁԱԳԱՆԳ, ՄՈՒՌԵ, ԼՈՒՄԱՅ և այլն) լայն տեսած աշխատութիւններէն Ազգագրութիւնը մեծ զարկ ստացած է շնորհիւ Գրիգոր Խալաթեանի խմբագրութեամբ հրատարակուող «ԵՄԻՆԱՆ ԱՁԱԳԱՆԳԱՆ ԺՈՂՈՎԱՆՈՒՅԻ հատորներու, եւ, մանաւանդ, Երուսաղէ լաւանքանի խմբագրութեամբ լոյս տեսած «ԱՁԱԳԱՆԿԱՆ ԶԱՆԴԱՍՅՈՒՆ» — 26 հատոր հատորներ: — Այս երկու հանդէսներուն շնորհիւ կեդրոնացած էին գրեթէ բոլոր բանահաւաքները:

Ներկայիս ազգագրական տեսակետով հետազոտուել են Անդր-Կովկասի գրեթէ բոլոր հայաբնակ գաւառները, ասոնց վերաբերեալ նիւթերը մեծ մասամբ տպագրուած ըլլալով՝ ամբողջովին հրապարակի վրայ զրուած են գիտական ուսումնասիրութեան համար: Իրաւաստանի հայաբնակ վայրերու մէջ կայ միայն Նոր-Նախիջևանի հայերու ազգագրութիւնը:

Մեծ ուրախութեամբ պէտք է աւելցնելք թէ աւելի կանոնաւոր և մեթոդիկ հանգամանքով և Հայ Մշակութիւնի զարգացման ոյժ տալու տեսակետով Խորհրդային Հայաստանի Կառավարութիւնը լրջօրէն զբաղած է Հայ բանահաւաքութեան պրոծով եւ Ազգագրական նիւթերու հրատարակութեամբ: Տարւոյս ընթացքին հրատարակեց ազգային հինաւուրց վէպ մը «Սաւանա Տուն» աշուշով, ստուար հատոր մը, որ զուտ գործոց մ'է, և պատմական խորանջին յիշումներով մը, վիպական գէպքերով յիշումներով իրական տեղի ունեցած պատմական գէպքերու, վիպական աշուշներուն տալով իրենց ճշգրիտ և բնորոշ հանգամանքները, հատորը զարգրուած է գիւնեցիկ

և պատմական նկարներով և վեպին մեկնաբանություններով ընդարձակ ներածություններ մը որոնք խմբագրվել են Մ. Աբելյան, այս կարգադրությամբ պատմություններն լուծած են վերջինյոս հետ ձեռնհաս ու կարող անծառնություններն, Հատորն ունի նաև «Աստվածաբանական» վեպին բազմաթիվ տարբերակներ, մեծապես յուսալի է որ Արևելաստեղ թանահաւաքութեան գործն ալ աւելի գիտական մեթոտներով պիտի յառաջանայ շնորհիւ իտրերդային Հայաստանի գիտատեսիլ շննքերուն և հրատարակութիւններուն:

Արևմտեան Հայք աւելի ուշ սկսած են Ազգագրական բանահաւաքութեան, որ ուժգին թափ ստացաւ մանաւանդ 1870 թուականներուն Ռոմ-Սև-ՏԱՅԻՍԱՅԻՍ պատերազմէն յետոյ, երբ Տաճկահայերու քաղաքական ազատագրութեան հարցը Հայաստանի մէջ կը դառնայ գերակա ու խնդիր մը, իբր Ազգային վերածննդի երան նպատակ: Արևմտահայոց բանահաւաք անհատներ և պարբերական մամուլը զարմանալի եռանդով լոյս կ'ընծայեն ազգագրական նիւթեր իբր ազգասիրական գործը: Ազգագրական նիւթերու մէջ կ'որոնէին գաղտագրեալ Հայ աշխարհը, և կը շնային կենդանիները Հայրենիքի հմայքը ու վերականգնել Հայ ժողովուրդը:

Նոյն բանահաւաքներու շարքին առաջնահարկ տեղ զբաղեց Տ. Գարեգին վարդապետ (Սրբուհանձտեանց (յետոյ Եպիսկոպոս) աշակերտը Իւրիմեան Հայրեկի: Մշոյ և այլ գաղափար առաջնորդութիւններով զբաղած է ևս ապա Պոլսի քարոզչի կարգուած է (Տ. 1892): Գարեգին վարդապետ, երբայկայիշատակ Տ. Ներսէս Պարտիարաքի առաջարկով կը մեկնի Հայաստան օրտան պէտքերու պահանջումով: Սրբուհանձտեանց իր հոգեւոր ու վարդապետ պաշտօնին կիրարկութեամբ հանդերձ անձնօրհարար կը լծուի բանահաւաքութեան կարեւոր գործին, կը թղթատէ վանքերու և եկեղեցիներու դարասուր ձեռագիրները, ու քննութեան վանքերէ կարեւոր նմուշներն ու ազգային Հաստատութեանց, ինչպէս նաև գրեանց վեճակացոյցը կը կալմէ, ու իր տեղեկարարած գաւառոր գրական ու եկեղեցական գործերը ու ժողովրդեան կրօնի ու կրթութեան յառաջդիմութիւնները մեծ խանցավառութիւն յառաջ կը բերեն ինչպէս մէջ, Սրբուհանձտեանց վարդապետ բանահաւաքութեան իր գանձերը կուտակեց իր յօրինած «Մանաման», «Թուրոս Մարաշ», «Հասմուղ Հազով», «Խորոց Բորց», «Սասունցի Գաւառ» զինքնակերպութեան և այլ գործոց ու աշխատութիւններու մէջ, Կարեկի է ըսել թէ անոնք նոր աշխարհներ յայտնաբերեցին Հայ Թուրքիոյ, ինչպէսզ Կաւասալիք և զանապա աւանդութեանց ձանայումով, անոնք մինչ այդ՝ անյայտ իշխարհ մէկին հայ բանասիրութեան համար: Իր Հասմուղ Հազովի գրեթէ իր հասկնալի թէ Գաւառի վարդապետ ստացած է Բյուզ. Գրիգոր Խաչաթեան հիացումներ վարդապետին յայտնաբերած բանասիրական արժեքատու գանձերուն, մինչև իր ժամանակ հ'առաջարկուի մեծահմուտ բա-

նասէր Մկրտիչ Խմինի կողմէն իր ծախքով հրատարակութեան տալու բանահաւաք վարդապետին անսխալ գործերը:

Գարեգին վարդապետի հետեւող մը եղած է Սլերգի Առաջնորդ հանգուցեալ Պետրոս Մ. վարդապետ Կալոյեցի, որ բացի իր միւս գործերէն, ունի բանահաւաքութեան աշխատութիւն մը «Արտակամ ձեռագրատեղոյութիւն» ի Հայրենիք անուամբ, որ 1881-ին հրատարակուած է Պոլսի, Ազգային բարեբար ուղարկեալ Արեւի Էփէնտի Ռանանի ծախքով: Իժմ շահեկան բանահաւաքութիւն մ'է աս. այլապէս ազգային նիւթերը զատ, մասնաւորապէս Քրդաց, Արևորդեաց աղանդներուն, հաւատալիքներու և արարողութեանց, Պոլսի և գաւառացի հայոց լեռնային նկատմամբ տեղեկութիւններ կուտայ: «ՄԱՍՍՈՒ» 1881 (Թ. 1940) գիտատական յօդուած մը գրած է այս բանահաւաքութեան մասին:

Արևմտահայոց մէջ 1875-1890, բացի վերոյիշեալ երկու վարդապետներէ, բանահաւաքութեամբ զբաղած են Տեղեկաց, Շերեշ, Ալլահ վերդեան, Միւրախբեան և այլք:

Լիւիկատար իւր Տանկահայաստանի ազգագրական հետազոտութիւնը, ունիւր գիտաորակէն վաստակաւոր, Տարունի, Պուլանլի, Ջէթուհի, Տերսիմի, Ակնայ, Բառնիի հայկական գաւառներու քիչ թէ շատ ամբողջական ազգագրութիւնները:

Վերոնշանակեալ վարդապետներէ զատ, ժողովրդական գաւառաբարբառներու ուսումնասիրութեամբ եւ Թուրքիայի նիւթերու հաւաքումով զբաղած են Հրաչեայ Անառնի, Թալաննէս Գաղանձեան, Մ. Ս. Գաբրիելեան, Մ. Ս. Խաչիկի, Սարգիս Սարգիսեան և այլք:

Իժմ ցաւալի է որ 1890-էն սկսեալ յանկարծ ընդհատեցան թիւերը Հայ բանահաւաքութեան եւ մարեցաւ Արևմտահայոց՝ Սրբուհանձտեանցի եւ այլոց միջոցաւ հրահրուած ազգագրութեան խանդավառութիւնը, վասնզի Տանկահայաստանի քաղաքական խնդիրները և թնամիւնի հալածանքները ամէն կերպով արգելք եղան նոյն ազգային ձեռնարկներուն: Հայաստանի վերջին կոտորածները, ահաւոր տարագրութիւնները, եւ այլ վատագաւոր և զոհողով զէպերը ամայացուցին մեր երկիրը կործանելով ամէն հետաքրքրութեան, եկեղեցի, զգրոց, վանք, հայր, և գաւառի ընդ ժողովուրդէն անոնք որ աւերէն ու կոտորածէն ազատ մնացին ծայր աստիճան թշուառութեան ժամանակ ցրուեցան օտար ափերէնը Եւրոպա, Ամերիկա, Պաշտանեան երկրներ և աւելի հեռու որ տեղեր: Տարագրութեան տարիներէն սկսեալ անոնք հազիւ կարողացան ունենալ իրենց տունը ու տեղը ևս ապրուստի միջոցներ: Երկուսի զարկ են շատ տեղեր ընկնողցի, զգրոցն սէրը և հոգեւոր հովիւներէ: Վատան ենք թէ մեր ծաւոր ժամանակի մէջ վերտալի պիտի արթնան իրենց սէրը ու հայրենի զգացումները միւսմտութեամբ լու Հայ Մշակոյթի անհրաժեշտութեան և նախահաց աւանդութեանց պահպանութեան: Հայ ժողովուրդը գիտէ թէ ինչպէս իր ձեռնադալարի Հաս-

[illegible]

Հայ Սփիւռքի մէջ սակաւաթիւ են հոգեւոր հովիտները եւ անբարասան նկիւղցեցին այլապես պահանջներուն՝ բաղդատամբ օտար եկեղեցի-հրեան պատշտելութեան։ Գարբերաբար գիմնում ենք ՀՊԿԱՆ Ս. Աթոռայ, որմէ զատ աւելի տեղ ունի չէիկայ որ գոհացնէ Սփիւռքի հոգեւոր պահանջերը։ Ս. Աթոռայ անտարաբակյա պիտի փութայ հոգեւոր հովիտներու առաքելութիւն մը կաստատանուի, ենք իր ներքին պէտքերը բաւականութեւն կ'ստանան փափագեցի է որ մեր ընծայա-

բանի մէջ հաստատուի բանադիրքական սկզբունքի զարեարեալ դասընթացը մը եւ բանահաւաքութեան գիտական մեթոտն ու փանին շնորհիւ դասաւանդութին ինձայացունեւորու՝ որդեգրի երբ հոգեւոր պաշտպանիլ Հայ Սփրեւե զմեկին՝ իրենց հոգեւոր եւ առարշարագական գործին հետ կը հաստատեն բանահաւաքութիւն ու կը ժողովեն Հայ Սոցիոլոյի բանահաւորի որ լինիէ հասաղմներ պիտի ըլլան մեր Հայրենիքը:

«ՄԱՐՈՑ ԹԱՐԳԱՆԱՅԻՆ — ԴՈՒՐԵՆԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՁԱՆԱԿԻ» ռուբրիկայի մեջ այս հանդիպման առթիւ մեր երանանքները շօր՝ անմահին ԴՈՒՐԵՆԱՆ ՏԷՐԵՆ ԴՆԻՔԻ ՄՐԱՐԱՋԱՆ ՊԱՏՐԻՍՏՐԻՔԻ հոգին այժմ պիտի հրճուի երկրին հոգի մը եւ պիտի ցնծայ բերրաւոր եւ այս ազգային ձեռնարկին համար՝ Գիտնէք եղբայրներ, թէ Լուսահոգին անշուշտական լիզուած գէտ մը եւ մեծ մտքով գիտնական մ'էր։ Սրբաւոր եւ շայրջ պահանջ մը զը նկատուի բանաստեղծութիւնն ու բանահայտը։ Դիւանի, այնպէս որ եթէ մեր Ընծայաբանին մէջ իրականութիւն գտնէ՛լ եւ, յիշուած այս դասընթացը՝ առաւելյապէս մեր շայրջ պիտի տարաւորի ին հոգիովն ու պիտի օրհնէ ին զաւակները։

Տիրույթէ կը մաղթեմ յաջողութիւն և արդիւնաւորութիւն միւր ըուր զործերուն համար:

25 Հոկտ. 1936 ԵԿԵՐՄԱՆ ԱՐՔԵՊՈՍ. ԱՂԱԽՆՈՒՆԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊՐՕՖ. Ն. ԱԴՈՆՑԻ

Ի ՄԱՍԻՆ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

«Հորեի՞նք Կեդրոնե՞ր ե՞ն ԳԼԶՁՐԻ ԲԱՐՁՐ ԴՊՐՈՅՐ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Գերապատիւ և Սրբազան Հա՛յր

Գարեգին արքեպիսկոպոսի աշխատութիւնը, որ հաճել էիք զրկել ինձ, օտացած եմ որ ժամանակին և մեղապարտ եմ որ անմիջապէս Ձեզ ոչինչ չզրեցի այս մասին, չզրեցի, որովհետև յոյս ունեի թէ չօտաով և հաճոյքով պիտի կարողանայի կատարել Սրբազնութեանդ պարտաւորել պատուէրը, մանաւանդ որ Հ. Գարեգինի գործերը ինքեցի ինքեայտուէր զրոյնով ինձ մօտէն ծանօթ լինելով՝ զժուար էլք բնաւ առաջին ակնարկէք և եթ զաղափար կազմէի իւր այս նոր աշխատութեան մասին և արքիւնքը Ձեզ հաղորդէի։ Սակայն լրիթացիկ հոգսերը արգելեցին և միայն ըմբռն հնարաւորութիւն

ստեղծ աչքէ անցնել, և ահա՛ ստորեւ յատնուով եմ Զեզ տպաւորութիւններս, որոնք Զեզ համար նորութիւն էլ պիտի լինին, քանի որ Յօրգ հմուտ աչքը արդէն դատած և կըշռաւծ է անհուշտ գործի ակնյայտին արժանիքները:

Հայ մշակողի՞թի պատմութեան համար մի խաղոր նպատակ է Գարեգին Սրբազանը՝ ճշարտանալաց-Դուրեանը՝ մրցանակին ներկայացուցած գործը՝ «Հաղեւոր կեդրեճեք եւ Պաճորի բարձր դպրոցը»։ «Ուղարակեանք» կամ Պռօշեանը հայոց պատմութեան էջը՝ աշխարհութեան շարունակութիւն լինելով հանդերձ այս գործը ինքն իրեն մի

ամբողջութիւնն է։ Սովորական կարծիք է, որ Բագրատունեաց անկումից յետոյ հայ կեանքը զահալվիժում է և մտնում մի խաւար շրջան, գրիթէ կոնդէ և աւելում գարբեր շարունակ կաշկանդուած իր գործունէութեան մէջ շնորհիւ իր շուրջը բռնացող օտարորոյ կարգերէն։ Սակայն, հակառակ այն ծանր կացութեան որ ստեղծուել էր Հայաստանում և ամբողջ Առաջաւոր Ստիպարում հեռուէն խուժած նոր և բարբարոս ժողովուրդներին հեղեղումով, անուրանալի է որ հայ կեանքը չէ մահացել։ Հայ հեզ աշխատասիրութիւնը, լինաբար ոգին և արթուն միտքը շարունակել են փալիլել զանազան կենտրոններում, ինչպէս մշտավառ ճրագներ, և յաւէտ կենսունակութեան ապացոյցներ տուել քաղաքակրթական նորանոր ճիւղերով և ստեղծագործութեամբ։

Արդ Գարեգին Սրբազանը նպատակ է գրել ժողովել և ներկայացնել այն զանաւորը որ սփռուած են անլոյս համարուած դարերում, հայ արուեստի և գիտութեան գանձերը՝ թաղուած փլատակների տակ և ձեռազիններին խորքերում։ Զարեաններին շրջանում և նրանց շնորհիւ երևան են գալիս մի քանի իշխանական գերդաստաններ, որոնք յաջողում են խոհեմ քաղաքականութեամբ մեղմել ահարկու բռնակալութեան թափերը և ստեղծել տանելի պայմաններ խաղող աշխատանքի կամարի Պոռչեան, Օրբէլեան, Դոփեան, Զալաբեան, Վաչուտեան և այլն տոհմերը լուսաշող աստղեր են հայ մթնին երկնակամարում, որ առաջնորդում են աշխարհաշէն և մտացոյց ոյժերը։ Հայր Գարեգինը ծրագրել է պանծացնել նրանց յիշատակը յատկացնելով իւրաքանչիւրին առանձին հատոր, սկսելով Պոռչեաններից։ Արցախի իսաբանական տոհմի մի շառաւիղն են Պոռչեանը որ տիրացան ԺԲ. դարու սկզբին Վայոց ձորին և այնտեղ իշխեցին սերունդէ սերունդ մինչև ԺԴ. դարը, ի դէմս Վասայի (※ 1224), Պոռչի (※ 1284), Պապաքի (※ 1298), Էաչի (※ 1317), Ամիր-Հասան (※ 1351), Արղուծ (※ 1385)։ Այնուհետև յաջորդական գիծը բեկում է, բայց տունը չէ մարում, այլ առկայծելով հասնում է մինչև Իսրայէլ Օրին (※ 1711), Պոռչեան քաջարի տան վերջին զաւակը, և մեր նոր հայրենասիրութեան վերջին երազուն գէմբը։ Ժա-

մանակակիցները զնահատել են արժանապէս Պոռչեան տան նշանակութիւնը, անուանելով Պոռչին սզարդ հեծելի, որ զերկարի դուռն առնէր փոշի, աջ ու բազուկ նոր Սիրնի, հիմն հաստատ հայոց հաւատին։

Պոռչեանց գործունէութիւնը քաղաքական և հասարակական ասպարէզում, նրանց շինարարութիւնը, կառուցած վանքերն ու բերդերը լուսաբանուած են ամէն կողմէ այն հատորում որ Գարեգին Սրբազանը լոյս է բնծայել Ներսէսում 1928 թվին։ Ներկայ հատորը նսիրուած է բացառապէս նոյն տոհմի հովանաւորութեան ներքոյ ծաղկած հոգեւոր կեանքի, մտաւոր հոսանքների, որոնց կենտրոններ հանդիսացան Կիջաութի, Այրվանքի և Դլաձորի գիտնական մենաստանները։

Այս հատորի և թէ արդէն լոյս տեսածի աստղաձը, հիմը կազմող փաստացի նիւթերը զուամարուած են առանձին հատորում, կցած աշխատութեան որպէս երրորդ մաս կամ հատոր։ Այս բաղկացած է երեք բաժնից։ Առաջինը կարեւորակում է մերձաւորապէս երկու հարիւր արձանագրութիւն. երկրորդը՝ մօտ հարիւր ձեռագրական յիշատակարան, և երրորդը՝ մի տասնեակ և աւելի մատենագրական նշխարներ։ Յատուկ ուշադրութեան և ուշահատանքի արժանի է մանանթդ այս ժողովածուն, որ հեղինակը յաւելածական է համարում, բայց գործի ամենէն կարեւոր և մնացուցիկ մասն է։ Ծշմարիտ է որ արձանագրութիւններին և յիշատակարանական քաղուածներին մեծազոյն մասը նախապէս յայտնի էր հայ բանասիրութեան, շնորհիւ Շահխաթունիի եւ Զալաբեանի և Մխիթարեանի գործերին, որոնց լիակատար ամփոփումը տուել է Հ. Այլւան «Սիւսական» և «Այրարատ» երկերում, բայց և այնպէս Հ. Գարեգինի ժողովածուն ունի նորութեան բոլոր առաւելութիւնները։ Անձամբ և տեղի վրայ ստուգել է գրեթէ բոլոր արձանագրութիւնները, որ իր նախորդները արտագրել են, և աւելացրել նորերը։ Շրջել է բաղմամբ Վայրբեր և վանքեր չէն թէ աւերակ, Բջնիից սկսած մինչև Վայոց ձոր և Զահուկ, դիտել և նկարագրել և երեքմե լուսանկարել այնքանով վայրեր, չէնքերի գիրքը, ներկայ վիճակը, նշանակել է հաւատարմօրէն

արձանագրութիւններէ տեղը պատերի վեւրայ եւ ո՞ր մասում, թէ փլատակներէ մէջ, մի խօսքով նախատեսել է բոլոր պարագաները որոնք կարող են որեւէ նկատումով պիտանի լինել հետազոտութեան ժամանակ: Համեմատել է տեղն ու տեղը առաջուց ծաւնոթ արձանագրութիւններէ պատճէնները եւ սրբազրեւ ամենայն բարեխղճութեամբ եւ մասնագէտի սուր եւ զիտակ աչքով: Ձկայ համարեայ մի արձանագրութիւն, ուրիշներէ պատգրուած, ուր որեւէ ուղղում կատարած չլինին, բառ թէ տառ: Թէ ամբողջ նախագատութիւն եւ մանաւանդ տեղի եւ անձանց անուններ:

Նոյն վերաբերումը նկատելի է եւ ձեռագրական քաղուածների վերաբերեալ: Նշանակել է ձեռագիրները, նրանց թուականները, եթէ յայտնի են, գրութեան տեղը, գրիչը եւ մանր հանգամանքներ, որ կարող են նպաստել յիշատակութեան պատմական թէ գրական արժէքը որոշելու:

Ահա այս եղանակով հաւաքել է մի կողմից ձեռագրական յիշատակարանների մէջ թագնուած տեղեկութիւնները, միւս կողմից՝ մամուլում քարերի գրութիւնները, զուգել դասաւորել եւ կապել ամբողջական պատկեր այնպիսի խնամքով, այնպիսի սիրով որ հաղուսագիտ է մեր առեն ինչ ուրացող դարում: «Հոգեւոր կեդրոնները» յառնում են իրենց տխուր աւերակներից, քարերը՝ ծանրաբեռնուած գրութեամբ եւ պէսպէս յիշատակներով սկսում են խօսել: Ձեր առջին են չէն մենաստաններ, որ ծաղկում են վանհայրերի հսկողութեան տակ, լի վանականներով, որոնք միայն աղօթողներ չեն, այլ վարդապետներ, ուսուցիչներ, են որ սղատ են ասում», ճարտար գրիչներ են, որ արտադրում են հնացած ձեռագիրները կորստից պաշտելու համար նախնեաց ժառանգութիւնը, շնորհալի ծաղկողներ են, որ նկարազարդում են ձեռագիրները, եւ հմուտ ճարտարապետներ, որ վերականգնում են աւեր շէնքերը եւ կառուցանում նորերը: Բարեպաշտ մարդեկ այլ թէ կլին, իշխանաւոր թէ համեստ աշխատաւոր, չեն զլանում իրենց նուէրները մեծ հաստատութեանց, գիտենալով որ այնտեղ են կռում հայ ժողովրդի գոյութեան հիմ՝ բարոյական հիմքերը:

Շնորհիւ Պոստեան տան հովանաւորութեան

թեան սկսում է մի մտաւոր շարժում, մի իրական վերածնունդ, որ շուտով տալիս է պանծալի գէմքեր — ինչպատուր Կեղառեցի, Յովհաննէս Գառնեցի, Մխիթար Այբլեւանեցի եւ վերջապէս Գլաձորի գիտուն Կաճառը բոլորում Եւսեբի վարդապետի՝ Եսայի Նշեցու շուրջը:

Հ. Գարեգինը նկարագրել է խանդավառ ոգով այս նոր հոսանքը եւ նորա բարեբար աղեղեցութիւնը հայ արուեստի, գիտութեան եւ եկեղեցական քաղաքականութեան վերայ: Առանց խախտելու հին գրականութեան եւ լեզուի իրաւունքները, այլ բնահակառակն մշակելով հին եկեղեցական վերայ իրենց միտքն ու աշխարհայեացքը, նրանք սկզբնապէս զրին նոր եւ աշխարհիկ բանաստեղծութեան: Խաչատուր Կեղառեցին, Ֆրիկ, Յովհաննէս Յրջնկացին միջնադարեան հայ քնարերգութեան կարապետներն են:

«Հանցագլուխ զինչ աճանգ Բաբին ու քափի գեթեր ի ծառէն,

Հողով մեղանաց իմոց գրկեցայ յանցանգ ապական»:


Ահա մի նմոյշ, որ նոր է և՛ լեզուով և՛ արամագրութեամբ եւ մինչ եւ իսկ չափով, որ հետեւողութիւն է բիւզանդական πολεμικὸς στοιχὲς կոչուած չափածոյ գրութեան: Ուշագրու երեւոյթ է:

Գառնեցու խրատներն եւ նորութիւնն են իրենց աշխարհային բնաւորութեամբ. «մի՛ լինիր կոշտ եւ կոպիտ, անհանձար եւ անխմաստ»: «մի շնացեն առ քեզ վարձք վարձակեան եւ աշխատութիւնք մշակաց»: «մի՛ քակեցես զցանգ հայրենի եւ կամ առ համարեացես զեղեալ կարգս եւ զկանոնս Եփեսացւոյ»: Այս վերջին հրահանգը բնորոշում է լիովին նոր հոսանքի ոգին: Գարեգին Սրբազանը չէ մոռացել յիշել այն խոշոր գերը որ կատարեցին Գլաձորի մըթնոլորտում սնած գիտուն վանականները առնաբար ճակատ դնելով Կիլիկիայի եկեղեցականութեան թուլամորթ քաղաքականութեան հանդէպ օտար դաւաճութիւններ յաւակնալից պահանջների: Պէտք էր աւելի շնչտել, քանի որ ամբողջ հոսանքն ինքնին այլ բան չէր քան հակադրեցութիւն «արեւմտեան վարդապետների» տարտամ եւ սայլթաքուն քաղաքականութեան: Ներսէս Լամբրոնացին որ կոչուած էր նոր Շնորհալի լինելու հայոց եկեղեցու համար

գերագահի «միտաքաղաքիստ» լինել օտա-
րի նման քան «խորադնազգիստ» իր նախ-
նիքների հետևելով, և հիմը գրեց օտա-
րամոլությունն էր. մի այստեղը երեւոյթ, որ
աւելի թիթեամտութիւն էր քան ազատա-
մտութիւն, և պիտի քայքայէր հայ եկեղե-
ցու դարաւոր կանգուն շէնքը, եթէ չլինէր
արեւելեան ախոյեանների ընդդիմութիւնը:
Կլաձորի դպրոցականների գիտական թէ ազ-
գայնական ոգին մի թանկագին ժառանգու-
թիւն է աւանգաձ սերունդէ սերունդ, ու-
սուցչից աշակերտ՝ Լամբրոնացու հակառա-
կորդ Ջորազեացիներից — Գրիգոր Տուտէ-
որդի և Մխիթար Գոչ — Վանական — Վար-
դան պատմիչ — Ներսէս Տառնցի — Յսայի
Նէյցի: Գառնեցու խրատը՝ «մի՛ քակեցեալ
զցանգ հայրենիս ուղղուած է տկարամիտ
օտարամոլների դէմ: Պէտք է ունենալ Ստե-
փանոս Օրբելեանի զաղափարական քաջու-
թիւնը յայտարարելով՝ թէ՛ հաւանիմք մեք
ընդ հարան ի դժոխս իշանել և ո՛չ ընդ հոռո-
մոց յերկինս ելանել»։ ասել է թէ՛ եթէ ան-
տեղի և աննպատակ համարել վիճաբանու-
թիւնները: Կլաձորի դպրոցի շարունակու-
թիւնն է Տաթևի դպրոցը, Յոհան Որոտնեցի
և Գրիգոր Տաթևացի մեծ հայրերով: Առանց
այս դպրոցի՝ Միլաթանների քարոզչութիւնը
շատ աւելի աղետարեի հետեւանքնիր պիտի
ունենար: Պոռչեանների օրով ստեղծուած
հաստատութիւնները պահեցին իրենց բա-
րոյական ազդեցութիւնը մինչև հայրապե-
տական աթոռի փոխադրութիւնը Էջմիա-
ծին 1441 թուին: Ահա՛ որպիսի նոր և ծա-
ւալուն լոյս է սփռուած Գարեգին Սրբազանի
գործը մեր անցեալի մի խոշոր շրջանի վե-
րայ: Որպիսի քանքով հաւաքել է ցրուած
նիւթերը. նոյնպիսի սերով մշակել և ըս-
տագրել հիմնովին իր հաւաքածօնն: Արձա-
նադրութիւնների ժողովածուն, կրկնում
ինք, մեծ գանձ է հայ բանասիրութեան
համար և անհրաժեշտ է որ հրատարակուի
խնամքով. թերևս հիմ ծառայի ապագայ
corpus-ի: Արձանագրութիւնները եղծուած
և կործուած են և պէտք է շտապել փրկել
ինչ որ դեռ հնարաւոր է անել: Հ. Գարե-
գինը նշանակել է ստորև իր կատարած սըր-
բագրութիւնները. ցանկալի էր կցիլ նաև
քննական դիտողութիւններ կամ մեկնու-
թիւններ, լուսաբանելու համար մութ եւ
չատ անգամ անհասկանալի կէտեր: Պէտք է

կարծել որ ինչ որ քարի վերայ գրած է
անպատճառ հարազատ է. քարը ևս թղթի
նման անճարակ է կեղծիքի դէմ: Օրինակ,
Կեչառիս վանքի հիմնարկութեան վերաբե-
րեալ արձանագրական վկայութիւնները հա-
կասական են և կասկածելի: Սիմէոն կա-
թողիկոսին ծանօթ է եղել մի արձանագրու-
թիւն ՆՍԴ = 995 թուից, որի համաձայն
վանքի հիմնադիրը Ապիրատ իշխանն է: Մի
այլ արձանագրութիւն ՆՅԲ = 1033 թ. այդ-
պիսին համարում է «Գրիգոր մագիստրոս
որդի Հասանայ», Գագիկ թագաւորի և Սար-
գիս կաթողիկոսի օրով: Մի երրորդ արձա-
նագրական վկայութեամբ եկեղեցին լինել
է Գրիգոր մագիստրոսը Կոստանդին Մոնո-
մաք կայսրի հրամանով Ղ = 1051 թուին:
Վերջապէս սոյն թուից մի վերջին երկար
արձանագրութիւն յայտնում է որ Գրիգոր
մագիստրոսը Կոստանդին կայսրից ոսկի մա-
տանի է բերել, ուրեմն մի քրիստոսը, և
ապառնել եկեղեցին և խնդրել որ «ամեն-
նէն շարաթ աւր դժամն Հասանա արագեն»
և նորա մահից յետոյ մագիստրոսին ա-
րագեն»:

Արդ 1033 թուին ո՛չ Գագիկ թագաւորը
և ո՛չ Սարգիս կաթողիկոս կենդանի չէին,
ինչպէս նկատել է որդէն Հ. Գարեգինը:
Գրիգոր մագիստրոս որդի Հասանայ ծանօթ
չէ պատմութեան: Հասանի որդին կոչուած
էր Ապիրատ, Հ. Գարեգինը կարծում է որ
Գրիգոր և Ապիրատ կրկնակի անուններ են
միևնոյն անձի և որ ՆՅԲ ուղղելու է ՆՄԲ
= 1003, բայց Ապիրատ մագիստրոսութեան
պատիւ չունէր: Մեր կարծիքն է որ արձա-
նագրութիւնը հարազատ չէ: Պատրոն բառն
արդէն մատնում է որ գիրը Զաքարիան
շրջանից յետոյ է: Միւս երկու արձանա-
գրութիւնները ևս վաւերական չեն: Կա-
տարեալ անհեթեթութիւն է սասել թէ եկե-
ղեցին շինուած է կայսրական հրամանով
և այն էլ Մոնոմաքի պէս մոլեռանդ կայ-
սրի հրամանով: Վերջին արձանագրութիւնը
ոճի գրութեան տեսակէտից չեն կարող ոչ
մի կերպ պատկանիլ Մագիստրոսին: Միակ
հարազատ գրութիւն պէտք է համարուի
Սիմէոն կաթողիկոսի յիշատակածը: Վար-
դան պատմիչը հաստատում է որ եկեղե-
ցու հիմնադիրը արդարև Ապիրատ իշխանն
էր. իսկ Ոււհայեցուց գիտենք որ նա որ-
դի էր Հասանայ և հայր Վասակի: Անհա-



րազատ արձանագրութեանց հեղինակները թուում է թէ ծանօթ են եղել Ապիրատի գրին, ուր ասուած է եղել թէ նա որդի է Հաստանայ և թէ եկեղեցին չինել է Գագիկի և Սարգսի օրով և խնդրում է ազօթել իր հօր «Հաստանի համար» և նորա մահից յետոյ Ապիրատի համար: Գրիգոր Մազիստրոս յիշում է Մարմաշէնի վանհօր Սոսթինէսին գրած նամակում որ ի նպատակ Մարմաշէնի ոսկի մատանի է հայթայթել (կոստանեան, էջ 103): Այս հասկանալի է, որովհետեւ Մարմաշէն կառուցել էր իր հօրեղբայր վահրամը: Մազիստրոս անշուշտ կը յիշատակէր եթէ նոյն արտօնութիւնը վեարպահուած լինէր նաեւ Կեչառիսի վանքին: Կեղծեալ արձանագրութիւններն ուշ են քան վարդան պատմիչը. սա եղել է Կեչառիսում և հարեան վանքերում, և չէր գլխաւ յիշել Գրիգոր մազիստրոսի անունը, որպէս վանքի շինող, եթէ որեւէ արձանագրութիւն տեսած լինէր: Բնոյ Քարսեղ եպիսկոպոսը, որ յիշում է 1051 թուի արձանագրութեան մէջ, հաւանօրէն, այն անձն է որ մասնակցեց 1295 թուի ժողովին, զուտարուած Ստեփանոս Օրբելեանի նախաձեռնութեամբ ընդգծել Գրիգոր Անավարզեցու: Վանքերն ևս իրենց զործելակերպ ունէին, երբ խնդիրը հասնում էր վանքի արտօնութիւնները պաշտպանելու: Ամեն պարագային քարերի լեզուն ևս պէտք ունի քննութեան նախ քան ականջ կախել նրանց թելադրութեանց:

Թանասի վանքի մի արձանագրութիւն կարդացւում է այսպէս.

Յանուն այ. ես բուբայիս թոռնս Սամա Գաւին որդի Այնասունայ ես Սարգիս որ տվի Թանասի վանից սբ. Ստեփանոսի զձարի նայ վարին հողն նաւցան հայրենիք նաքան տվին ինձ զայստութե. և. աւր. թ. խր. անով, ով խափանէ յժը. հայրապետացն նզովեալ եղիցի: (Ա. 167)

Հ. Գարեգինը կարեւոր սրբազրութիւններ է արել իր նախորդների արտագրութեանց մէջ: Յիշենք միայն՝ «Ղաթանավարին հողնացան հայրենիք անքակ» անվիաստ ընթերցուածը, կամ «Ղաթախնաց վարին հողնացանի հայրենիքն»: Սամադաւ և Սամադաւէ

արաբ. անուշ. Այնասուն կամ Այնասունա. հաւանօրէն պարսիկ Այնասիմա, մաքուր երես ունեցող: Սակայն մնում են տակաւին մութ կէտեր: Ի՞նչ է նշանակում «զձարի նայ վարին հողն». արգեօք ճամփի (ճանապարհի) այն վարի հողը: Հ. Գարեգինը հնարաւոր է գտնում կարգաւ նաեւ ջատի. գուցէ ջափի (ճամփի): Սայտութեան Ս. աւր. թուում է թէ պէտք է կարգաւ Ա. աւր. Տարօրինակ է որ արձանագրութիւնը սկսում է Բուբայիս, բայց շարունակում է Սարգիս խօսելով միայն իր անունով, (տվի, նաք (= նոքա) տվին ինձ): Հ. Գարեգինը չի նշանակել թէ զբան որ կողմն է գտնուում այս արձանագրութիւնը: Բայց յաջորդ արձանագրութեան համար ասուած է որ զբան ալ կողմն է գտնուում և կարդացւում է այսպէս.

Կամաւ այ. ես Բաւրինայ միայրանեցայ սբ. ուխտիս ետու յիմ հալալ ընչից ընձայ ի սբ. Ստեփանոս միայրանքս սահմանեցին բ. աւր պատարազ սբ. խաչին. կատարիքն աւրին յայ. (Ա. 168).

Անտարակոյն է որ այս Բաւրինայ նոյն անձն է ինչ որ նախորդ արձանագրութեան մէջ կոչուած է Բուբայիս և որի նուիրաբերութիւնն չէր յիշուած. այստեղ պակաս լրացւում է Արգեօք գրին է պատասխանատու այս անկարգ գրութեան համար: Անձի անունն է իսկապէս Բուբայ և ոչ Բուբայիս, որ է փոխան ես Բուբայ-ս: Բաւրինայ պէտք է կարգաւ՝ Բաւրի մայ միայրանեցայ, ուր մայ ժողովրդական լեզուի մէջ անտի մասսա ունի և կարծես թէ ակնարկ է թէ լրացնում է ինչ որ բաց է թողած նախնութեան արձանագրութեան մէջ: Առաջին արտագրողները կարդացել են Բուբինայ, որ իբրեւում է տալիս համարել իսկական ձևը Բուբի և ոչ Բաւրի: Բուբայ անունը յայտնի է Հայր Օհաննավանքի (Նոր-Բայազիտի մօտ) մի արձանագրութիւնից: Բուբայ կարող է սղուել Բուբէ (յիշենք հին Դաստաբայ և Դատարէ), որից և Բուբի: Կեչառիսի մի արձանագրութեան մէջ (յաւել. Ա. 42) ոմն Հայրաձայն գնել է «յԱռինը յիմ պատրոն Բուլալէն»: Իսկ Բուբայի արձանագրութեան մէջ ասուած է որ նա ճետ առուէնից զայգին Ոսկերակայ և այլ: Առուից, հաւանօրէն, նոյն Առինչի գիւղէն է: Եթէ այս ճիշտ է, այն ժամանակ Բուլալ

սրբաբերեալ է Թերեա Բուպայեմ, նոյն Բու-
բայ անուան մի այլ հնչուներ, Հարկաւ ան-
ձերը կարող են տարբեր լինել. կայ և Բու-
բայ) և Բորէ, որ կնոջ անուն է: Քիչ չեն
արձանագրութիւնները որ նման գիտողու-
թեանց առիթ են տալիս:

Յատուկ անունները ուղղելիս՝ լաւ կը
լինէր յիշատակել այլ վկայութիւններ, եթէ
կան ի նպաստ նոր ընթերցումի: Օր. Թեկդի
անուան փոխարէն Հ. Գ. կարգում է Թեիկ
(Ա. 163): Ի հաստատութիւն, պէտք էր յի-
շել նոյն անունը Թայիկ և Թաիկ գրութեամբ
պատահում են այլուր (Բազնայր, Հոռոմոս
և Յովհաննապանք):

Կան դէպքեր, ուր հնարաւոր է ճշտել
ընթերցումը. որ. զիւաւնոցի նորքն աւելի
լաւ է կարգալ՝ զկաւնոց ի նորքն: Անծա-
նօթ է անսովոր բառեր պէտք է նկատողու-
թեան առնուին, մինչև անգամ երբ դժուար
է մեկնել: Օր. շինակնատուն, անշուշտ՝
չինական ատուն, թէեւ իբրեւան իմաստը
մնում է մութ: Նապայտար = Նաւասարգ,
ասարանոց, որ Հ. Գ. կարծում է ուղղել՝
ամարանոց: Թուում է թէ պարսիկ *hasar* =
սառնոց բառից է և նշանակում է սառցա-
տուն: Քրդերէնում ծանօթ է այդ բառը,
թէև յեղաշրջուած՝ *sahar*, և ուրեմն հա-
ւանական է որ մեր ժողովուրդի մէջ էլ գոր-
ծածական լինէր:

Նուրբատունների տալիքը և պայման-
ները աւելի կարեւոր են քան կարծում է
և պէտք է ուշադիր լինել ստոյգ ընթեր-
ցանութեամբ: Օր. Մամբուն նուիրում է
Ի. = 20 դահեկան և պարտաւորում երկու
ժամ (Յաւ. Ա. 83): Սխալ է, պէտք է կար-
գալ *ն*. = 40 դահեկան: Նկատելի է որ
տարուան մէջ մի ժամ (այսինքն, պատա-
րագ կամ հեկեղեցական պաշտօն արժէ 20
դահեկան, երկու ժամը՝ 40 դահեկան, երեք
ժամը՝ 60, վեց ժամը՝ 120 և այլ. երբ մի
այդի նուիրարեւողը պահանջում է 2 ժամ,
նշանակում է նորա այգին արժէ $2 \times 20 = 40$
դահեկան. Եւ ուշադրաւ է, որ այգիների
խոշոր մասը գնահատուած է 2 ժամ, այսինքն
40 դահեկան: Երբ մի խորանի շինութեան
համար պարտաւորում է չորս ժամ, նշանա-
կում է շինութիւնը նստել է $4 \times 20 = 80$
դահեկան. Այսպիսով ստանում ենք մի ու-
րջ պատկեր տնտեսական կեանքի վերա-
բերեալ երեւոյթների: Ոմն (յաւ. Ա. 33)

տալիս է 1000 սպիտակ և խնդրում հինգ
ժամ: Հինգ ժամը արժէ $5 \times 20 = 100$ դա-
հեկան. որի հակադէպն է հազար սպիտակ
ասել է թէ 10 սպիտակը մի դահեկան է:
Մի ուրիշ անգամ տաան հազար սպիտակի
դէմ համաձայնում են տալ քառասուն ժամ,
ուրեմն $40 \times 20 = 800$ դահեկան: Տաան հա-
զար սպիտակ = ութ հարիւր դահեկան. հե-
տեաբար՝ մի դահեկան կ'արժէ $12\frac{1}{2}$ սպի-
տակ: Դահեկանն՝ ոսկի դրամ է, սպիտակը՝
արծաթ: Ոսկէ և արծաթէ դրամները այս
յարաբերութիւնը ($1 = 10$ կամ $12\frac{1}{2}$) հաս-
տատում է ուրիշ աղբիւրներից: Յիշենք
նաև որ 40 դուկատը պարտաւորում է 2
ժամ, այսինքն 40 դահեկան, որից երեւում
է որ դուկատը ոսկի դրամ է հաւասար դա-
հեկանի: Այս և նման անսպասելի և կա-
րեւոր հետեւութիւնները պահանջում են որ
արձանագրութիւնները որքան հնարաւոր
է խնամքով կրտսարակուին: Հ. Գարեգինը
սովորութիւն ունի երբեմն նկատողութիւն-
ներ դնել արձանագրութիւնների բնագրում
հարցական նշաններով և կամ մեկնութիւն-
ներ տալով: Կարծում եմ, որ կրտսարա-
կութեան միջոցին, ձեռնպահ պէտք է մնայ
այս ձեռք և իր ասելիքը զետեղէ բնագրից
դուրս ստորեւ նկատողութեանց և ուղղում-
ների բաժնում: Կասկած չունինք որ հրա-
տարակութիւնը կը պատասխանէ ժամանա-
կակից պահանջներին և կը դատուի որպէս
մնայուն գործ Հ. Գարեգինի միւս աշխա-
տութիւնների շարքին: Պէտք է խոստովա-
նիլ, որ Սրբազանի գրեթէ բոլոր բանասի-
բական և պատմական վաստակները յարա-
տեւ լինելու բացառիկ բախտ ունին, սկսած
իր անդրանիկ գործից՝ Սաւմայ ծուէր, հրատ.
1891 թ. մինչև Խաղբալեանցներին նուիրած
վերջին աշխատութիւնը: Գարեգին Սրբա-
զանը չէ սիրում շրջել կոխտաժ տափերի
վերայ և ո'չ եռանդ թափել անլուծանելի
խնդիրների շուրջը, այլ հետամուտ է եղել
միշտ նորութիւններ բերել հայ բանասիրու-
թեան: Առաջին երկը արդէն բնորոշել եւ
նախագծել են նրա հետաքրքրութեան եւ
նախասիրութեան դաշտերը ու առաւելա-
պէս հայ ժողովուրդի ստեղծագործութեան
գեղեցիկ արուեստների աշխարհում: Կէս
գար շարութիւն հետեւ է միանգամ զօած
ուղիին անվրէպ և անշեղ, հետեւ էլ զեւ-
ղուն սիրով և անընկճելի եռանդով, ա-

ռանց երբեք թերահալու իր եկեղեցականի ծանր պարտականութեանց մէջ՝ Գլխավորի զպրոցի աշօրուան ուսումնասիրողը, կարելի է ասել առանց չափազանցութեան, աւելի իրաւունք ունի քան որեւէ ուրիշը, համարուիլ նոյն զպրոցի հայրենաշուէն ու գուէ նորա շուրջը գեղեցիկ սրբակրօն վանականներէ հեռուոր աւանդապահը ո՛չ միայն իր գիտական պատրաստութեամբ, այլ և կրօնաւորի անաղարտ վարքով: Վարդապետ կոչեմ ոչ զայն, ասում է Գլխավորի իմաստութիւնը, որ բազում բան ի բերան

առնու, այլ որ մաքուր վարս ստացեալ ունի»: Այս կրկնակի նկատումով «Թարգմանչաց» — Դուրեանն մրցանակը աւելի արւածանաւոր թեկնածու չէ կարող ունենալ քան ներկայացուցած աշխատութեան հեղինակ Գարիգին Արքեպիսկոպոսը, հայ եկեղեցու և գիտութեան անկուռ սպասաւորը:

Ոսոքս երկարացաւ թէև երկարաբաւ նութիւն պէտք չէր, թո՛ղ ներող լինի Ձերդ Սրբազնութիւնը և ընդունէ յարգալիք ողջոյներիս հետ բարեկամութեանս և պատրաստակամութեանս հաւատարմը:

Օրհնութիւնդ հայցող և միշտ անձնուէր

18 յուլիսի 1936

Բերիւսէլ

Ն. ԱՅՈՒՆՑ

ՆՈՐԱԳԻՒՏ ՀԱՅԵՐԷՆ ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԲԵՐԴԻ ՄԷՋ

Հայաստանի գիտական ինստիտուտը 1922 թուին մի փոքրիկ, ուսումնասիրական արշաւ կազմեց զէպի Անբերդ գետակի հովիտը, Արազածի հարաւային լանջերին, որ արժանի է խորին ուշադրութեան իւր հնութիւններով (*):

Գրանցից մէկն է Անբերդ կամ ներկայ, ժողովրդական արտասանութեամբ Համբերդ ամրոցը, որի անունով և գետակն է կոչւում, լեռան լանջերին, միջին բարձրութեան վերայ, Բիւրական պատմական գիւղից բարձր: Այդ տեղ ահներեւ կերպով երեք շրջանի շինարարութեան մնացորդներ կան, նախաքրիստոնէական — Ուրարտական, Բագրատունեաց և Ջաքարեան շրջանների: Ուրարտական է պարսպի մի մասը, բայց արդէն տաշուած, ուրեմն և յետագայ դարերի գործ, մօտաւորապէս 15-20 դարի նախ քան Գրիստոս: [Դարդ են և ծանաչելի նաև Ջաքարեան շրջանի նրանց կողմնակալ Վաղուտեանների շինարարութիւնները, պարսպի գէպի գետը խոնարհող մասերով

(Պատկ. 1) և յատկապէս հիւսիսային դարաստով: Բազմաթիւ մատենագրական և արձանագրական աղբիւրներից գիտենք, որ Անբերդը նուաճել է Ջաքարեա Մեծ եւ յանձնել Վաղուտեանների նախահօրը ժառանգական իրաւունքով (*): Բերդի կեդրոնում եղած եկեղեցու (Պատկ. 3) մի արձանագրութիւն էլ հաստատում է այդ իրողութիւնը: Կենց Վաղուտեաններից մէկը Քուրդ Անբերդեցի, որ ասել է, թէ մի ժամանակ ծառայել է նաև բերդը իրրեւ իշխանութեան կեդրոն (**):

Բայց անորոշ էր բերդի արեւմտեան կողմն ընկած գլեպիկ (Պատկ. 2 և 1. աշտարակներէ մասը) և եկեղեցու (Պատկ. 3) ծաղման խնդիրը: Թորամանեանը կարծում էր զղեպիկ ժԱ. դարի, իսկ եկեղեցին ժԻ-ի գործ է, իսկ մենք համոզուած էինք, որ ժԱ. դարուց ուշ չէ, ի նկատի առնելով յատկապէս գմբէթի կազմութիւնը: Բարեբախտաբար խնդիրը պարզեց եկեղեցու հիւսիսային դրան ճակատաքարի արձանագրութիւնը, ներսից, որ բանասիրութեան

(*) Արշալին մասնակից էին Սենքերիմ տ. Յալոբան, Երուսեղ տ. Մինասեան, Տարտարապետ Թորամանեան և տողերիս զորդը իրրեւ անդամներ, իսկ նկարիչ Տարապրսը որպէս աշխատակից:

(*) Տես մեր Խաղաղականը եւայն եր. 8-9, 16:

(**) Այս մասին տես Ալիշանի Այլարատը, համապատասխան մասում:

անյայտ էր և մեզ համար զժուարթնթեռնիլ, յթութեան և անյարմարութիւննիրի պատճառով: Ստիպուած էինք խնդրել նկարիչ Տորպորտսէն հետամտմով որժանագրութեան պատճէնը հանի, որ և յետոյ, երկու ժամ երուանդ Տ. Մինասեանի հետ չորչարուհիւց յետոյ, կարելի եղաւ կարգաւ, գրիթէ, ամբողջութեամբ, որ հետեւեալն է.


1. Յամին ՆՀԵ(*)
2. Ես իշխանս վարհամշ(ի)
3. Նեցի զկաթողիկեա աթոռ.
4. Հայրապետական եւ սահման

စာရင်း

13. արդ որ ոչ կատարեք պատժեցի (s!)
 . 100.

14. իշխան ար տիրէ. (Տէր ար քէ.) Կա-
կառ կա դատի յԱյ:

Ըստ այսմ եկեղեցին շինել է Հայոց
ՆՇԷ կամ Գրիգչական 1027 թուին վաթսմ
Պահպանունին, այնտեղ հաստատելով Ե.
Արխիդիոսական աթոռ, Նիգ եւ Արքեպե-
ստոն դաստաներով Քաղքողաշաի (Վաղար-
շապատ) հետ ե քրջ տուրքեր նշանակելով
նորա պահպանութեան համար: Պուռա-
ւունեանց իշխան Քեան մէջ այս մի գուռ-




պատկեր 1

5. Եցի պտուղ Նիզի տունն Բ. կային
6. ցր. յարագածոտանի յեղին Բ. փաս
զի(նի)
7. Ի քաղքոզաշտի բարակն Ժ. լիտ
յերեկ(?)
8. Ն և Ա ԳՀ. յիւրոյն(?) կնոյն Գ.
ԳՀ. հողաղ(Բ) ձեռն
9. Նազրեի. Գ. յԱնբերդի պտուղ (Ա
ԲԷ Ի)(?) տունն
10. Գ. կային ցր. ա. կտաւահատ. ա. .
. (Տ Բաւ)
11. Զաղացն վերակարմնէին Ի պսակն Գ.
12. ԳՀ. հողաղ. կնքաղք. տնաւարին.

զահեռ երեւոյթ էր Ռճնիի եպիսկոպոսութեան հաստատութեան՝ որ կատարուեցաւ միւլենոյն ժամանակ Գրիգոր Մագիստրոսի ձեռքով :

Մեկնեցող թուականով հաստատում է նաև զղևակի ծագման խնդիրը, որ առանց այս արձանագրության էլ հանգուցեալ թուրմանհանր ժվ. զարի գործ էր համարում, մամանեթիւն դանկելով սորա աշտաւակներով զարդարում մասի (Պաշ. 1) և լինինականի դիմաց, Ախուրեանի աջ ափին, չնքի հետ: Արևելեան կողմը (Պաշ. 2) կողով է քիչ աւելի հին լինել, որ շատ հետաքրքրական է իբրև աշխարհիկ և հոգեաւարկու շէնքի մնացորդ, ետարակ և խոս

(*) Տողատուած է բնագրի համեմատ: 2 տողում
2-ն կիսով չափ միայն երեւում է:



պատկեր 2 եւ 3

շոր լուսամուտներով, որ տեղից հրաշալի տեսարան է բացում նայողի առջ զէպի Բիւրական, Փարպի, Աշտարակ և Օշական գիւղերը, մինչև հեռաւոր Երեւանն ու նո-
րա շրջակայքը:

Հսում ենք, որ յայտնի հայ գիտնա-
նիւ Եորժ

Կան Յովսէփ Օրբէլին, հանգուցեալ Մառի աշակերտն ու երկարամեայ գործակիցը Ա-
նիի պեղումների ժամանակ, Հայաստանի
կառավարութեան օժանդակութեամբ եւ
թոյլտուութեամբ պեղումներ պիտի կա-
տարի այնտեղ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ.

ՊԱՂԵՍՏԻՆԱԳՐԱԿԱՆ

ԶԿԵՆՆԵՍԱՐԷԹԻ ԳԵՆԵՆԵՍԱՐԷԹԻ ԾՈՎԱԿԻՆ ՎՐԱՅ

ԵՒ ՍՈՒՐԲ ԱԿԵՏԱՐԱՆԸ

Կեննեսարէթի ծովակն ու իւր ափունքը և զայն շրջապատող նկարագեղ բլուրները գլխաւոր թատրը եղած են մեր Տիրոջ հասարակական կեանքին: Յիսուս այնտեղ գրեթէ ձկնորսներու չրջանակի մը մէջ ապրեցաւ: Ձկնորսութիւնն ու ձուկերը, որոնք մինչև 26 անգամ յիշուած են Աւետարաններուն մէջ, առիթ տուին բազմաթիւ գէպքերու և աւետարանական շատ մը հրաշքներու:

Dr. Lortetի 1875 — 1880 տարիներուն Սիւրիոյ ու Պաղեստինի մէջ կատարած գիտական աշխատութեանց ու Dom Zephirin Bieverի Տիբերական ծովի ափունքը տասնը-եօթը տարի բնակութեան միջոցին կատարած զննութեանց լոյսով այժմ կարելի պիտի ըլլայ խօսել նոյն ծովակի ձուկերուն ու ձկնորսներուն և ձկնորսական գործիքներուն մասին: Մօտենանք ուրեմն նիւթին՝ աւետարանական բնագրին տուեալներուն համաձայն ու փորձենք աւելի մանրամասնութեամբ թափանցել անոր քանի մը հոյակապ ու սքանչելի տեսարաններուն, որոնց պատմութիւնը աւետարանիչները կ'աւանդեն այնքան նկարագեղ ու այնքան սըրտագրաւ:

Ա. ԶՈՒԿԵՐԸ

Տիբերական ծովը միշտ անուանի եղած է իւր առատ ու համեղ ձուկերով: Անոնք կը պատկանին Կիպրագլիններու (Cyprinides), քրոմագլիններու (Chromides) եւ կատուագլիններու (Silurides) երեք ընտանիքներուն:

Կիպրագլինները ծառաներ են, որոնցմէ ձկնաբանները 23 տեսակներ կը թուեն Տիբերական ծովին մէջ: Ամենէն մեծերը 60 — 65 սնգմ. երկայնութիւն ունին: Երբ մէկը կարգաւու ըլլայ Յովհաննու Աւետարանին մէջ պատմուած (Իւ. 12—19) երկորդ հրաշալի ձկնորսութիւնը՝ իր միտքը բնականաբար կ'երթայ շատ տարածուած այս ձուկե-

րուն. «Մտաւ նաւը Սիմոն-Պետրոս ու ցամաք քաշեց ուռկանը՝ լեցուն հարիւր յիսուն երեք խոշոր ձուկերով, ու հակառակ այս մեծ թիւին՝ չը պատռեցաւ ուռկանը»:

Այս ծածաններու ամենէն փոքր տեսակները, որոնք արծաթափայլ գոյն մը ունին, շատ առատ են ու շատ համեղ: Ընդհանրապէս կը կարծուի թէ այս մանր ձուկը՝ Տարիքէայի մէջ աղուելով՝ կը զրկուէր Հըռոմ ու հոն garum կոչուած համբաւաւոր թացանը կը պատրաստուէր անկէ:

Այս տեսակէն էին հաւանաբար Յովհաննու Աւետարանին մէջ յիշուած (Ձ. 9—11) այն երկու աղած ձուկերը, որոնք հինգ զարեղէն նկանակներու հետ պատանիի մը քով կը գտնուէին և զորս հրաշքով բազմացուց Յիսուս Բեթսայիդայէն ոչ շատ հեռու ամայի տեղ մը:

Գրոմագլիններու ընտանիքը, Գալիլէայի ծովին մէջ, ութ տեսակներէ կը բաղկանայ, որոնց գլխաւորները ծանօթ են Տիբերական ֆրոմիս կամ Տիբերիալիս (Chromis Tiberiadis, Tiberialis) և Սիմոնեան ֆրոմիս (Chromis Simeonis) անուններով: Այս ձուկերը յայտնի են իրենց թիկունքի թեւերու վրայի սուր փուշերով, զորս՝ պաշտպանուելու համար՝ կրնան ցցել կամ վար իջեցնել. ասոր համար Արարացիք զանոնք մուսր (= սատոր) կ'անուանեն: Ձկնաբանները անոնց վրայ նկատած են հետաքրքրական մասնայատուութիւն մը, զոր Dr. Lortet կը նկարագրէ այսպէս.

«Գրոմիսներէն շատերը իրենց ձուկը կը թխեն ու ձագերը կը մեծցնեն իրենց բերնին մէջ, Յաճախ հազիւ 20 սնգմ. ձկան մը բերնին մէջ կը գտնուին 200 արծաթափայլ ձկնիկներ, որոնք սնդիկի կաթիլներու նման աւազին վրայ կ'իյնան: Ձկնիկները այդ եղանակն ապաստանաբանին մէջ քանի մը շաբաթ ապրելէ յետոյ՝ զուրս կ'ելլեն միայն այն ատեն՝ երբ բաւական գարգա-

նան ու կարենան խուսափիլ իրենց թշնամիներու հալածանքէն ու ինքնին հալթայթիլ իրենց սնունդը: Սիմէոնեան քրոմիս կուռած տեսակը անագին բերան մը ունի, համեմատելով իր մարմինն ծաւալին հետ Գարնան եղանակին արուին այսերը միշտ ուռած կ'ըլլան ձուերով կամ ձկնիկներով, զորս ամէնուրեք իրեն հետ կը տանին Դըժուար է խելք հասցնել թէ ինչպէս այդ հոգածու հայրը կրնայ օտար ձուկ մը որսալ առանց վիրաւորելու կամ կուլ տալու մէկ մտաք իր ձագուկներուն: Անիկա շուրի մէջ եղած ատեն բնաւ բերնէն զուրս չի հաներ իր ձագերը: Թխուովի այս նորորինակ խուռչին մէջ ձուերը քանի մը օրէն իրենց կատարեալ կերպարանափոխութիւնը կը ստանան: Փոքրիկները, որ քիչ ատենէն նկատելի կերպով կը զարգանան, շատ նեղուած կ'երևին իրենց անձուկ բանտին մէջ, ուր մէկը միւսին դէմ սեղմուած կը մնան նուա՛ն հասիկներու պէս: Այն ատեն սնուցիչ հօրը բերանը այնքան ձգտուած կ'ըլլայ իր ձագուկներու ներկայութենէն, որ հալելու կըրնայ իր ծնօտները իրարու մօտեցնել:

Ասիկա պայծառ լոյս մը կը սփռէ Մատթէոսի Աւետարանին մէջ պատմուած հետեւեալ հետաքրքրական գէպքին վրայ (ժէ. 23-26): Յիսուս իր հասարակական կեանքի ընթացքին Կափառնաուսը ընտրած էր իրեն բնակավայր ու եղած էր անոր քաղաքացին: Օրին մէկը պաշտօնեայ մը, որ Մովսիսական Օրէնքով սահմանուած (Եւք. Լ. 13) Տաճարի հարկերը կը հաւաքէր, կը կեցնէ Սիմոն — Պետրոս ու կը հարցնէ. «Ձեր վարդապետը չի՞ տար երկրամասնը»: — Այո՛, կը պատասխանէ առաքելը Սաւայն այնքան պարզ չէր խնդրը որքան ինք կը կարծէր: Երբ Պետրոս առու կը մտնէ, կը մօտենայ իրեն Յիսուս ու կ'ըսէ. «Ի՞նչպէս կը թուի քեզ, Սիմոն, ազգաց թագաւորները որոնցմէ՞ կ'առնեն հարկը կամ հատոյթը, իրենց որդիներէն թէ օտարներէն»: — «Օտարներէն»: — «Աղաւս ե՛ն ուրեմն որդիները», կը յարէ Յիսուս: Ան ըսել կ'ուզէր. այդ հարկը, զոր կը պահանջեն իմ ձօրս՝ երկինքի Թագաւորին համար, միթէ ես պարտաւոր եմ վճարելու: Պետրոս կը թափանցէ Յիսուսի խօսքի իմաստին, բայց Հրեաները պիտի չկրնային ըմբռնել այսպիսի բացառութիւն մը ու պիտի գայթակ-

զէին: Պէտք էր ուրեմն վճարել երկրաւ մեանը: Բայց որպէ՛ս զի բացայայտ երեցնէ իր Աստուծոյ Որդի ըլլալը, որու մարմին քիչ առաջ յիշեցուցած էր իր հիւրընկալին, ցոյց կու տայ Յիսուս իր ամենակարողութիւնը՝ հրաշքի մը միջոցաւ վճարելով հարկը՝ իր ու Պետրոսի փոխարէն: Ու ծովակին ձուկը կ'ըլլայ հրաշքին միջոցը: «Մով գնա՛, կ'ըսէ Յիսուս Սիմոնին, ձգէ՛ կարթը ու ելած առաջին ձուկը՝ ա՛ռ, բա՛ց անոր բերանը ու հոն սատար մը (երկրգրամեանին կրկինը) պիտի գտնես, ա՛ռ զայն ու սո՛ւր իմ ուքու փոխարէն»:

Այսպիսի հրաշք մը անկարելի է որ ըլլայ, ըսած են քանի մը բանապաշտներ, հետեւաբար լոկ առասպել մըն է անիկա: Ո՞րն էր կարթով որսացուող այն փոքրիկ ձուկը, որ կարենար թէ՛ բերնին մէջ սատար մը ունենալ և թէ՛ նոյն ատեն կարթը խածնել: Զինաբանը կը պատասխանէ. — քրոմիս ձուկն է այն, որ առատութեամբ կը զտնուի Տիրեբական ծովին մէջ եւ որ կը կազմութեան շնորհիւ ճիշդ ու ճիշդ կ'իրականացնէ այն պայմանները՝ որոնցմով կը բացատրուի Աւետարանի եղելութիւնը: «Այդ ձուկը, կ'ըսէ իրաւաբ. H. Lesêtre(*) հակառակ իր բերնին մէջ սատար մը ունենալուն, առանց զժուարճութեան կրցաւ խածնել նաեւ կարթը, ինչպէս որ նոյնը պիտի ընէին իրեն ցեղակից ձուկերը՝ երբ կուլ տային իրենց սնունդին յատուկ որ եւ որս, այնպիսի պարագայի մը՝ երբ բերանին լեցուն ըլլար ձկնիկներով»:

Տիրեբական ծովի ձուկերուն երրորդ ընտանիքին պատկանող Կասուագիներու (Silurides) մէջ տեսակը միայն կը գտնուի հոն, այն՝ զոր Արաբները պարպոյթ կ'անուանեն, և որուն գիտական անունն է *Clarias macracanthus*: Ասոր երկայնութիւնն է միջին հաշուով 90 սնդու. բայց կան ալ որ կը հասնին 1,30 մէդրէն մինչև 1,45 մէդրի ու կը կռնեն 35 էն 40 քիլոյ: Այս ձուկին Կասուագի կոչուելուն պատճառն է՝ կատուի նման պիսիւր ունենալէն զատ՝ իր սա զարմանալի յատկութիւնը, որ ջուրէն զուրս հանուած ատեն երբոր ձեռքով բռնեն կամ գաւազանով կը գրգռեն՝ զայրացած կատուի ձայնին յարենման ձայն կը արձակէ (Dr. Lortet):

(*) Dictionnaire de la Bible. հտ. Ե. էջ 487:

Clariasը կամ կատուածուկը առատ է Տիբերական ծովին մէջ. ան ընդհանրապէս կը գտնուի լիճին սկային եղերքները ու կը պահուելուի սէզներու և քարերու մէջ և ծառերու արմատներու ներքեւ. երբեմն ձեռքով ալ կը բռնուի Գիննեսարէթի հովտին բազմաթիւ ակերուն մէջ: Անիկա կ'որսա-ցուի նաև ուռկանով՝ միւս տեսակներուն հետ միասին, բայց որովհետև Հրեաներուն արգելուած է զայն ուտել, այդ պատճառաւ կատուածուկը աւելի ատան կը վաճառուի միւս տեսակներէն» (Dom Biever):

Այս արգելքը անկէ առաջ եկած է՝ որ, ինչպէս Եգիպտոսի Clarias anguillarisը, նոյնպէս նաև մեր այս պարսպորքը դուրի է թեփէ: Մովսիսական Օրէնքը կ'ըսէ. «Ու ծովերու ու գետերու մէջ եղած անթեւ ու անթեփ կենդանիները պիտի ըլլան ձեզի... անոնց միտէն պիտի չուտէք» ՊԼատ. ԺԱ. 10-12):

Յիսուս երբ Կափառնաուլի կողմերը նաւակի մը վրայ նստած՝ ծովափէն իրեն ունկնդրող Ժողովուրդին կ'ուսուցանէր, հետեալ առակը ըսաւ (Մատթ. ԺԳ. 47-50). «Երկրիցի արքայութիւնը կը նմանի ծովը ձգուած ուռկանի մը, որ ամէն տեսակէն կը ժողվէ. ու երբոր լեցուեցաւ, ցամաք հանեցին ու նստան աղէկները ամանի մը մէջ ժողվեցին ու խոտանները դուրս ձգեցին: Այսպէս պիտի ըլլայ նաև աշխարհի կատարածին. հրեշտակները պիտի հլլեն ու չարերը արդարներէն պիտի դատեն ու հնոցի կրակին մէջ պիտի ձգեն»: Աստուածային Վարդապետին ունկնդրող Հրեաներու միտքը, անշուշտ, այդ կատուածուկերուն դեմնաց, որոնք միայն, ինչպէս կ'երևի, Գալիլեայի ծովակին մէջ կը պատկանէին ընտանիքին արգելուած այն ձուկերուն, որ դուրս կը ձգուին վերջին օրը:

Նոյն այս ձուկերուն պատկերը չէ՞ր որ ներկայացաւ այն բազմաթիւ Գալիլեացիներու միտքին, երբ Երանութեանց լերան վրայ Յիսուսի արտասանած սա խօսքերը լսեցին. «Ո՞վ է ձեզմէ այն մէկը, որմէ ետէ՛ իր ողորդի ձուկ ուզէ, միթէ՞ օ՞ճ պիտի տայ անոր: Արդ եթէ դուք որ չար էք՝ ձեր գաւականերուն աղէկ ընծաներ տալ գիտէք, ո՞րչափ աւելի ձեր Հայրը որ երկինքն է՝ բարի բաներ պիտի տայ անոնց՝ որ իրմէ կը խնդրեն» (Մատթ. Է. 9-11):

Այս գէպը տեղի կ'ունենար ծովակի

անմիջական մօտերը: Փրկչի ունկնդրներուն մէջ այնտղ կային կէս-հրեայ կէս-հեթանոսներ, որոնք չէին պահեր Մովսիսական պատուէրները ու անխտիր կ'ուտէին ու իրենց գաւականներուն ալ կ'ընծայէին այդ կատուածուկերէն, որոնք առաջին տեսութեամբ կը նմանէին իրենց ափերը ապակա-նող լորտուներուն, օձերուն եւ եղջերաւոր խժերուն (*):

Բ. ԶԱՆՈՐՈՆԵՐԸ

Գալիլեայի ծովակին հանդարտ ու ար-ծաթափայլ ափունքներուն վրայ կայսոր միայն Տիբերիա ու Սեմաք, վերջին հետքերը փարթաւ անցեալի մը, զոր ջնջած են խալամական տիրապետութեան խաւար դարերը: Այս ամայութիւնը ու Պաղեստինի միւս աւաններուն ու քաղաքներուն ինչպէս նաև Սիւրիոյ հետ յարաբերութեանց չզոյւթիւնը նկատելիօրէն նուազեցուցած են հոն թէ՛ ձկնորսութիւնը, թէ՛ ձկնորսնե-րու թիւը: Dr. Lortetի ժամանակ ձկնորսու-թիւնը կը գտնուէր նաւավարներու փոքրիկ ընկերակցութեան մը ձեռքը, որ միայն վեց մականի ունէր ու անոնցմէ օրական երկուքը կարգաւ ծովը կ'ըլլէին: Վերջին քսան տարիներուն ձուկի առեւտուրը զգալի համամասութեամբ աւելցած է՝ Սեմաք-Հայ-Փա-Գամաակոս երկաթուղագիծին շինուե-լուն ու այդ կողմերը հրեայ բնակչութեան աւելնալուն պատճառաւ: Եւ սակայն այսօր ջրային թուռներն են տակաւին Գալիլեայի գլխաւոր ձկնորսները:

Երբոր քարունը հասնի՝ ջրագաւաններու ամպեր կը փռուին ծովակին վրայ: Անոնք կ'ընկղմին ջուրին խորը ու ապա երեսը կ'ըլլեն իրենց կտուցին մէջ ունենալով խո-շոր ձուկ մը: Այն ատեն գլխու ընդոստ շարժումով մը ջրագաւաը դէպի վեր ողոր-մէ՛ կը նետէ իր որսը, որ իսկոյն կ'իյնայ գլխովայ՝ ուղղակի թռչունի կոկորդին մէջ:

Արագիւններու բազմաթիւ խումբեր իրենց բնակութիւնը հաստատած են ծովա-կին հիւսիս-արեւմուտքը, մօտերը այն վայ-րին՝ ուր Յորդանան կը թափի լայն գետա-բերանով մը: Իրարմէ որոշ հեռաւորութեամբ մեծ շրջանակ մը կազմած և գլուխին դե-

(*) Dom Biever կը հստատէ թէ մէկ տարուան մէջ այդ գետափ կենդանիներէն 15ի չափ սպան-նած է Նոյնիսկ իր բնակած տան մէջ:

պի շրջանակին կեդրոնը զարձուցած՝ այդ խոշոր թաղուհները առաուն կանուխէն գիւրին ու արդիւնաւէտ որսի մը անձնատուր կ'ըլլան: Երբեմն նաեւ հանգրտութեն կը ճեմեն ջրագուաներուն մէջ, ու երբ այս սուգորդներէն մին ջուրին երեսը ելլէ իր որսին հետ՝ ճակնթարթի մը մէջ կը խլին անոր կտուցէն որսը եւ կամ կը յափշտակեն այն վայրկեանին՝ երբ ջրագուանը օդին մէջ կը նետէ զայն (Dom Biever):

Անթիւ բրկաւոր սուգակներ կը լողան ծովակէն երեսը: Կարելի չէ ապրիլէն սեպտեմբեր շրջիլ լճեզերքը ու չտեսնել անոնց գլուխները, որ, սուգանաւորու շրջագէտներու նման, յանկարծ կ'երևան, քանի մը վայրկեան կը սահին ջուրերու հայելիին վերայէն ու մէկէն կ'աներևութանան ջուրին խորութեան մէջ եւ 100էն մինչեւ 200 մէջր անդին նորէն երեսը կ'ելլեն: Այս գիշակեր թաղուհները մեծ քանակութեամբ կը լափեն փոքր ձուկերը: Իսկ մեծ ձուկերէն կը տորներ կը փրցնեն զարմանալի յաջողութեամբ: Վեհոնք քրոմխներու աչքեր կ'ուտեն, կը գրէ Lortet, եւ իրենց երկար եւ սուր կտուցին մէկ հարուածով հարտար վիրաբոյժի մը պէս կը խլեն անոնց աչքերու գուռները շրջապատի մտեղէն թաղանթով միասին:

Ճայն ու փրնկակները, կանչուրուող որորը կամ ծովածիծառը, ջրահաւն ու մարտինահաւը (martin pêcheur) կ'ամբողջացնեն շարքը այն թաղուհներուն, որոնց համար նախախնամութեան կողմէ պատրաստուած սեղան մըն է կարծես Տիբերական ծովը:

Աւետարանական շրջանին Գալիլեացիներն էին գլխաւորապէս վայելողները այդ սեղանին: Իրենց նաւակները կ'աօնէին ծովակի մոմէն կողմերը, ինչպէս կ'աւանդէ Յովհաննէս Աւետարանիչ, ու իրենց սուգակները այդ ջուրերուն մէջ գիշեր ցերեկ կ'որսային առատօրէն:

Բազմաթիւ քաղաքներ ու աւաններ պըսակի մը նման կը բլուրէին Գալիլեայի ծովակը. Երուսաղէմ՝ Մազաթա, Գեներեսարէթ, Կափառնաուզ, Բեթսայիդա, Բորազին, ու հարաւէն՝ Տիբերիա, Սեննաբրիս, Տարիքէա, Գազարա, Հիպպոս ու Սփիկ: Յայտնի է Աւետարանէն՝ թէ բազմաթիւ ձկնորսական նաւակներ կային Երուսաղէմի նաւահանգիստներուն եւ ծովախորշերուն մէջ, Գենեսարէթի

հարուստ հովիտի ափունքը, նաեւ Կափառնաուզ ու Բեթսայիդա: Յայտնի է զարծնալ՝ թէ Պետրոսի, Անդրէասի, Յակոբոսի, Յովհաննէսի ու Փիլիպպոսի, որոնք ամէնքն ալ ձկնորսներ էին, հայրենիքն էր Բեթսայիդա, առաջնակարգ օրոսարանն մը, ինչպէս իր անունէն կ'երևի: Հարաւը՝ Տարիքէա քաղաքը իր անունը առած էր ձկան աղածոյի (taricos) իր մասնագիտութենէն, զոր կ'արտածէր մինչեւ Հռոմ: Բնական էր ուրեմն՝ որ ծովակին ձուկը, թարմ կամ սղած, Գալիլեացիներու սնունդին կարեւոր մասը կազմէր: Այս է որ կը սորվինք Աւետարանէն: Երբոր ժողովուրդը, երկիցս, զմայլած Փրկչի քարոզութիւններէն ու հրաշքերէն, կը խմբուի բնակութեան վայրիւրէ հեռու ծովակի արեւելեան կողմը, այնտեղ չի գլուխուրդնէր, զորս հրաշքով կը բազմացնէ Յիսուս ու կը բաժնէ նախ 4000 ու ապա 5000 մարդոց:

Որոշակ գրօսանքի համար՝ հաճելի ու առողջապահիկ մարդանք մ'ընէ, բայց որոշակ Տիբերական ծովին մէջ ապրուստ ճարելու համար՝ դժուար կ'արհեստ մըն է, վասնզի կլիմայական պայմանները երբեմն այնքան վտանգաւոր կը դարձնեն հոն նաւարկութիւնը՝ որքան ուկիսանոսի բացերը: Եջմրան եղանակին, կը գրէ Dom Biever, արեւելեան քամիները կ'ըլլեն ամստեղ, ու այնքան սաստկութեամբ կը փչեն երբեմն, որ նոյնիսկ հեռուներէն կը տեսնուին ծովին խոշոր ալիքներուն փչրուելը Տիբերիոյ տուններու պատերուն դէմ: Այս տեսարանը լոյս մը կը սփռէ Աւետարանի մէկ էջին վերայ: Յիշեցէ՛ք առաջին անգամ հացերը բազմացնելու հրաշքին յաջորդող գիշերը: Արեւելեան քամին անուշտ այնքան սաստկութեամբ կը փչէր, որ Պետրոս ու իր ընկերները, հակառակ ամբողջ գիշերը երեսց թափած ճիգերուն, չկրցան Բեթսայիդա ցամաք ելլել, ուր իրմէ աւալը երթալ պատուիրած էր Յիսուս՝ մինչեւ որ ինք արձակէ ժողովուրդը (Մարկ. 9. 45-52):

Վաժմինները մէկէնիմէկ կ'իյնան ծովակին վերայ, կը գրէ Dom Biever, ու շատ անգամ կը տեսնուի որ անոր իւզի նման խաղաղ ու ողորկ մահերեսը կէս ժամուան մէջ կը ծածկուի փրփրադէզ ալիքներով: Նաւահանգիստներու ընկղմիւր հաշուադէպ է այսօր, վա-

սընդիլ ճնաւաւարները աղէկ կը ճանչնան մրրիկը կանխող նշանները, զորս տեսնելուան պէս՝ իրենց նաւակները ցամաք կը քաշեն, և շահու ոչ մէկ հրապոյր չի կըրնար լինին վրայ ճամբորդելու ստիպել զանոնքս: Ձենք զիտրի՝ թէ Պետրոս ու իր ընկերները կը ճանչնային մրրիկը կանխող նշանները թէ ոչ. և եթէ իրիկուն մը կափառնառւով ոսկմաններէն նաւեցին գէպի հարաւարեւելք՝ Գերգեսացւոց երկիրը, Տիրոջ քաղաքը հրամանին հնազանդելու համար էր միայն (Մատթ. Ը. 18): Նոյն գիշերը ծովակին բացերը յանկարծ սկսաւ ալէկոծութիւնը, ու երկու նաւակները ապահովաբար պիտի ընկղմէին հովին աստղութենէն՝ եթէ Յիսուս, արթննալով իրեններուն սա յուսահատական աղաղակէն «Տէ՛ր, փրկեա՛ւ ըզմեզ՝ զի կորնչլիմք», հրամանով մը չզսպէր չղթյաղերծուած տաքերը:

Առաքելներու ժամանակ ձկնորսներու գործը աւելի ծանր էր քան այսօր, վասնզի եթէ անկէ առջին՝ այդ կողմերու ամայացման հետեւեալով՝ առատացած է ձուկը, այդպէս չէր սակայն այն ատեն: Աւետարանն ալ երկու անգամ կը յիշէ որսորդութենէ անյալով վերադարձեր. Պետրոս, Անդրեաս, Յակոբն և Յովհաննէս աշխատած էին բոլոր գիշերը ու բան մը չէին բռնած:

Բիթալիգայի մեր այս ձկնորսները շատ վաւթ էին իրենց արհեստին մէջ ու մանկութենէ սովոր էին զրկանքներու, եղանակի խստութեան և ծանր աշխատանքներու: Աւելցուցէք ասոնց վրայ աղքատութիւնը, նաեւ պարզ ու շիտակ նկարագրի մը պարկեշտութիւնը, այն ատեն հասկնալի կ'ըլլայ՝ թէ ինչպէ՞ս մեր Տէրը ձկնորսներու այս դասակարգէն ընտրեց իր աշակերտները, որոնք հետագային աշխարհէ աշխարհ պիտի ընթանային ու յաղթանակ պիտի տանէին դարուն ետականութեան ու ամբարտաւանութեան վրայ:

Գ. ԶԿՆՈՐՈՒԹԻՒՆ Ը

ձկնորսական չորս տեսակ գործիք կը կիրարկուի Տիրբերից մէջ. կարթալար ու իրարմէ տարբեր երեք ուռկաններ:

Ծայրը մէկ կամ աւելի կարթեր անցուած լարով մըն էր որ Պետրոս, Յիսուսի հրամանով, որոսաց քրոմիսը ու անոր բերնին մէջ զտաւ հարկին ստուերը:

Ուռկանի մէկ տեսակը (épercier), զոր Սրաբները շապախ կ'անուանեն, թիւերով հիսուած կ'ունենէ ցանց մըն է՝ 2, 50 մէգր բարձր, զոր լուրը կը ձգեն ծովափէն եւ կամ ցամաքին մօտերը յաճող նաւակին մէջէն: Յաջողելու համար պէտք է ուժով մը նետել գործիքը, ու աջ բազուկով 4—5 մէգր տրամագիծով շրջանակ մը ձնացնելով՝ լուրին մէջ ձգել զայն: Կապարները, որոնք ծոպերու պէս կախուած են անոր եւ զերքեներէն, շուտ մը գործիքը յատակը կ'իջեցնեն ու ամփոփուելով՝ ուռկանին մէջ կը պարփակեն անոր շրջանակին մէջ գտնուող ձուկերը:

Հաւանաբար այս տեսակ ուռկանով ձուկ կ'որսային Սիմոն-Պետրոս ու իր եղբայրը Անդրէաս՝ երբ Յիսուս Գալիլեայի ծովակին եզերքը քալած ատեն նշմարեց զանոնք իրենց նաւակին մէջ եւ ըսաւ. «Ետեւէս եւ կէք», ու անոնք ձգելով նաւակն ու գործիքը անոր հետեւեցան: Աւետարանիչին բացատրութիւնը որ եւ է կասկած չի թողուր՝ թէ սարկեալ ուռկան ի ծով» (Մատթ. Գ. 18) ըսածը այս գործիքն էր, այսինքն ամփոփուող ուռկանը: Հաւանաբար այս տեսակ գործիքով մըն էր նաեւ, որ տեղի ունեցած վերջին հրաշալի ձկնորսութիւնը, երբ Փրկիչը երևնալով իր աշակերտներէն եօթնին՝ ըսաւ. «Նաւին աշակողմը ձգեցէք ուռկանը ու պիտի գտնէք» (Յովհ. ԻՍ. 1—11): Այն ատեն չկրնալով վեր հանել գործիքը, որ 153 մեծամեծ ձուկեր կը պարունակէին, ստիպուեցան նաւակին օգնութեամբ մինչև ծովափը քաշել: Կափառնառւով շրջականութեն արար մը, կը գրէ Dom Biever, որ մը ձեռքի ուռկանը ձգելով՝ մէկ անգամէն 42 քիւ ձուկ որոսաց: Կասկած չկայ՝ թէ ասիկա յաջող որս մըն էր, և սակայն Պետրոսինը հրաշալի էր պարզապէս, որ կատարուեցաւ Յիսուսի հրամանով: Ասով Փերս կիչը կամեցաւ ցոյց տալ այն արդանաւոր առաքելութիւնը զոր հետագային իր հրամանով պիտի կատարէին աշակերտները:

Գալիլեայի ծովակի ձկնորսներուն այս օրումն կիրարկած միւս գործիքը (senne կամ seine) կը կոչուի արաբերէն ճարֆ, որ ի գործածութեան է Սեմաքի նաեւ Տիրբերից մէջ: Անիկա ուղղանկիւն ուռկան մըն է, 400—500 մէգր երկայն և 2—3 մէգր լայն, ուրուն վերին մասին սուռկեր անցուած են ու

ստորին մասին՝ կապարներ ու ծայրերէն պարաններով կապուած։ Մինչ զայն կրող նաւակը կը թիւփալէր ծովակին վրայ՝ ընդարձակ աղեղ մը բուրբերով, յետաւորդ մը կեցած նաւաւորը կամաց կամաց կուրին մէջ կը ձգէ ուռկանը։ Երբ կազմուի կիսաբոլոր փակոցը՝ այն ատեն ծովափը կեցողները ուռկանին կապուած պարաններով կը քաշեն գործիքը, որ եղբքը կը հանէ ինչ ձուկ որ պատահի իր առջև։

Այս կերպ ձկնորսութիւնն էր, զոր Յիսուս նմանցուց երկինքի արքայութեան (Մատթ. ԺԳ. 47-51). «Երկինքի արքայութիւնը ծովը ձգուած ուռկանի կը նմանի, որ ամէն տեսակէն կը հաւաքէ. ու երբոր լեցուեցաւ՝ ցամաք հանեցին ու նստան աղէկները ամանի մէջ ժողկեցին ու խոտանները զուրս ձգեցին։ Այսպէս պիտի ըլլայ նաեւ աշխարհի կատարածին»։

Ուռկանի վերջին տեսակ մըն ալ կայ, զոր Արարնիւր կ'անուանեն մ'պսսհն։ Ան բազկացած է իրարու կցուած երեք ցանցերէ, 3 մէդր լայնքով ու 100 մէդր երկայնութեամբ։ Մէջտեղի ցանցը աւելի սեղմ օղակներ ունի, իսկպէս որ ձուկներ, ամէն մեծութեամբ և խառն խառն, կը բռնուին այդ ցանցերուն մէջ։ Ապա ձկնորսները որոշ հեռաւորութեան մը վրայ նաւակով բազմիցն չրջանը կ'ընեն ուռկանին ու թիակներով ջուրը կը ձեւեն, որպէսզի ձուկերը վախնան ու ինչան ցանցերուն մէջ, ինչպէս ճանճը կ'իյնայ սարգի ստատանին մէջ։ Երբ արդիւնաւոր ըլլայ որքա՞ն ուռկանը ձուկերու ծանրութեան ներքեւ մէջտեղէն դէպի վար կը սուկի ու սուկերը կ'անհերուածանան ջուրերուն տակ։ Այն ատեն դէպի նաւակը կը քաշեն գործիքը, ու աւարը ժողկեցին յետոյ՝ զայն վերստին կը վարեն քիչ մը անդին։

Գիշեր ատեն կատարուող ձկնորսութեան այս կերպն է, զոր Դուկաս Աւետարանիչ (Ե. 1-12). Փրկչի աշակերտներու ձեռամբ եղած կը ներկայացնէ։ Յիսուս ժողովուրդին քարոզելու համար Պետրոսի նաւակին մէջ կեցած է։ Երբ խօսելի կը դարձնէ իր հրամայէ անոր. «Առաջ տար նաւը դէպի խորունկը ու ձգեցէ՛ք ձեր գործիքը ձուկ որսալու։ Վարդապետ, պատասխանեց Սիմոն, բոլոր գիշերը աշխատեցանք ու բան մը չբռնեցինք, բայց քու խօսքիդ համար ձգեցի գործիքը։ Ու երբ այդպէս ըրին՝

խիստ շատ ձուկեր փակեցին ներս՝ ուռկանները պատռուելու աստիճան»։

Մին զիստաւոր գաղափարներէն աւետարանական բոլոր այն դէպքերուն, ուր հանդէս կու գան Գիննիսարէթի ձուկերն ու ձկնորսները, այն է՝ զոր նոյնինքն Յիսուս կը բացատրէ այլ եւ այլ ատեններ. «Մի՛ վախնաք, այսուհետեւ մարդոց որսորդներ պիտի ընեմ ձեզի»։ Առաջին ջրիստոնեաներուն սիրելի էր այս աշխարհնութիւնը, կրօնքի համար նահատակուողներու շիրմաներուն վրայ անոնք յաճախ ներկայացուած են փոքրիկ ձուկերով՝ ջուրէն հանուած՝ ձեռամբ խորհրդաւոր ձկնորսի մը, Պետրոսի կամ ուրիշ առաքելի մը, որ վերստին կը ծնի զանոնք շնորհաց աւազանին մէջ։ Հաւատացեալները պարտին պահել մկրտութեան շնորհը, «վասնզի, ջրիստոնեան, կ'ըսէ սուրբ մը, կը նմանի ձուկի մը, որ կենդանի ջուրի մէջ կ'ապրի»։

Գաղիլէայի ծովակի աւետարանական տեսարաններու յիշատակը ծնունդ տուած է ուրիշ պատկերի մը։ Սրկու առիթներով աստուածային Վարդապետը ձուկը իբրեւ խորհրդաւոր սնունդ մը ցոյց տուած է իր աշակերտներուն։ Յիսուս վերջին անգամ Գիննիսարէթի ծովափը հրեւցած ատեն իր իսկ ձեռքով խորոված էր ձուկ մը ու բաժնէն իր զայն իր աշակերտներէն եօթմիսն հետ (Յովհ. ԽԱ.)։ Գրիստոնեաներու առաջին սերունդը այս եղիլութիւնը մերձեցնելով հացերու և ձուկերու բազմացումին՝ ձուկը Ս. Հաղորդութեան խորհրդանշանը համարեցաւ, ինչպէս կ'երեւի գետնադամբաններու յիշատակարաններուն վերայ։ Այդ յիշատակարաններու մէկուն վրայ կայ ուշագրաւ նկար մը, ուր արուեստագէտը իրարու հետ միացնելով աւետարանական երկու տեսարանները՝ կը ներկայացնէ Եօթն բազմականներ, հացի կողովներով լեցուն սեղանի մը շուրջ, ուր կայ նաեւ ձուկ մը միայն, զոր իրենց մէջ կը բաժնեն։ Այդ բազմականները գրեթէ մերկ են, ինչոր ցոյց կու տայ թէ իրենց նաւակներէն նոր դուրս ելած ձկնորսներ են, Յովհաննէս Աւետարանիչի նկարագրածին համաձայն։ Ս. Յոստոնոս ասոր իմաստը կը բացատրէ սկիւռն բաւարացով մը. «Piscis assus Christus est passus», որ կը նշանակէ՝ «Սկիւռոված ձուկը ցաւատանջ Գրիստոսն է»։

Այսպէս ուրեմն Յիսուսի մտածումին մէջ նոյնիսկ՝ Տիբերական ծովի ձուկը բարձր արժէքի մը հասած է. անիկա բացորոշապէս կը խորհրդանշէ Քրիստոսը, Ս. Հագորգութեան Քրիստոսը, նոյնինքն տառապող Քրիստոսը: Շատ անգամ խաչի խորհրդանշանը համարուող երեք ժանիկի մը վերայ անցուած զլվիկն ալ այս մեկնութիւնը կը հաստատէ: Նոյնն է նաեւ պարագան յուսնաբէն IXΘΥC (= ձուկն) բառին, որուն աւելն մէկ տառին մէջ քրիստոնեաները տեսան այն հինգ բառերուն սկզբնատառերը, որոնցմով կը կապուի Նիքոսիոսի 'Ιησους Χριστος Θεου Υιός Σωτήρ (= Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ Փրկիչ):

Կ'աւարտենք գրութիւնս ուղղելով ընթերցողներուն երկրորդ Դարէն հասած տապանագիրի մը սա գեղեցիկ մաղթանքը, զոր քրիստոնեայ Պեկտորիոս կ'ուղղէ ի Քրիստոս իր եղբայրներուն.

Ո՛վ աստուծային սերունդ երկնաւոր Զկան,
մաքուր սիրտ մը կրէ՝ միտք,
Ապրե՛ մահկանացուներու հետ այսեղ՝ աստուծային շուրեքու անմահ սկիւն մէջ...
Ընդունե՛ մեզրի նման քաղցր սնունդը՝ սուրբերու Փրկչին ձեռքէն,
Ու ձեռքերով մէջ բռնելով ԱՅԻՆԿ՝ յագեցու՛ր անօրութիւնդ:

Հայացող՝ Մ. Ե. Ն.

Գ Ի Ր Ք Մ Ը

— 0 —

Իսկապէս «սրտագին» դրուածք մըն է այն՝ զոր Տրապիզոնի «պատկեալ» Եպիսկոպոսը, Տ. Գարեգին Սրբազան Խաչատուրեան, այժմ ի Մարտէյլ, հրատարակած է քառածալ, 374 էջոց, պատկերազարդ շքեղ հատորով մը, «Աշխարհի լոյսն ի Հայս, կամ Աւետարանի լոյսը Հայաստանեայց եկեղեցւոյ պրիսմակէն» վերնագրին տակ, ա՛յս տարի, մաքուր տպագրութեամբ, ի Փարիզ:

Բանասիրական յաւակնութիւններէ կամ

գրագիտական հրայրքներէ չէ որ մղուած է Սրբազանը՝ ծնունդ տալու համար այդ ուշագրաւ գործին (թէ և այդ երկուքն ալ — բանասիրութիւն և գրականութիւն — կը զգացնեն ինքզինքնին անոր էջերէն շատերուն վրայ, որչափ որ պիտի տանէր նիւթը՝ իրեն համար նախագծուած այդ սահմանին մէջ), ալ, ինչպէս անոր ենթատիտղոսը կը յատնէ, Հատ գովելի տենչէ՛ մը՝ «Կիրակնօրեայ դասեր կամ ընթերցումներ» ներկայացնելու համար անոնց, որոնց մէջ դեռ արթուն է իրենց հաւատքին, եկեղեցիին և պատմութեան զգացումը: Աւելի մասնաւորելով՝ իր բուն դիտումն է, ինչպէս զբքին ընդհանուր խորագիրը կը զգացնէ, լուսբաննէ քրիստոնէական կրօնքի հայ կեանքի մէջ հաստատումը և արդիւնաւորումը՝ եկեղեցական գրականութեան և պատմութեան փաստարկութեամբ: Ու, պէտք է ըսել, Սրբազանը այս մասին իր մեթոդը կը գործադրէ լրիւ, կարծես առաւելագոյն ջանագրութեամբ նոյն իսկ, քանի որ երբեմն կը հեռանայ մինչեւ կրօններու և փիլիսոփայութեան պատմութեանց սահմաններէն բաւական ներս:

Երեք շրջաններու բաժնուած է գործն ամբողջ. Նախաբիսոսնեական, Առաւելական կամ Նախալուսաւորչեան, Լուսաւորչեան: Առաջինին մէջ, որ երկու ստորաբաժանում ունի՝ Իւրաքանչիւրը իր բազմաթիւ ենթամասերով, հակիրճ բայց յստակ դատումներով նկատի կ'առնուի կրօնի մագման ու կրօններու և ճշմարիտ կրօնին համեմատութեան հարցերը, և յետոյ կը խօսուի Հայոց հին կրօնին մասին: Երկրորդին մէջ, որ վեց մասեր ունի՝ մէն մին 4-6 հատուածներով, իրենց ընդհանուր գիծերուն վրայ կը նկարագրուի Թաղէսի և Բարթոլոմէոսի առաքելական գործունէութիւնը, Ռսկեանց և Սուքիասեանց, Թէոդորոս Սալահուեիի և Հովհիսիմեանց ու Գալիսեանց պատմական և վկայաբանական դրուագներով: Երրորդին մէջ, որ կը բաղկանայ եօթը մասերէ, սակայն մէկը 5-15 յոգուածներով, աւելի հանգամանորէն կը ներկայացուի Լուսաւորչի և Որդւոց և Թուանց դարաշրջանը, մինչև Մեծն Ներսէս:

Իւրաքանչիւր գլուխ, պէտք է ըսել, պանծացումն է կրօնաբարոյական սկզբունքի մը կամ եկեղեցապատմական ճշմարտութեան մը, պատկերազեղուած, ընդլայնուած և լուսաբանուած՝ աստուածանշակաւ ընթերցումներով, մեկնողական խորհրդածութիւններով, և յաճախ՝ պատ-

մական եւ աշխարհագրական ծանօթութիւններով եւ յարգութեամբ պատկանեալ շարականներու, որոնք, ինչպէս Ս. Գրոց բոլոր մէջ բերուած հատուածները, վերածուած են արդի մաքուր հայերէնի։ Պիտի լուզէինք սակայն որ աշխարհաբարի դարձուած այդ շարականներուն՝ իրենց գլխաւոր բնագիծներուն չափն ալ հազցուած ըլլար, որպէսզի երգուելու փորձութեան չենթարկուէին իրենց ընթերցողները։ — Գործին բովանդակ ընթացքին մէջ, հեղինակը մտադրաւով մեծագոյն զազափարն է ճանչցնել եւ սիրցնել հայացած քրիստոնէութիւնը, Հայ Եկեղեցին, եւ ոչ թէ պատմաքննական հետազոտութեանց ձգտել. առար համար է անշուշտ որ Լուսաւորչի նըւիրուած մասին մէջ, երբ կը խօսի մեր եւկեղեցւոյ նկարագրին, յօրինուածքին եւ կառմանկերպութեան վրայ, եկեղեցւոյ չէնքի, սպասներու եւ նուիրապետական ու պաշտամունքային գրութիւնը նկատի կ'առնէ ոչ թէ այդ հին օրերու՝ այլ ներկայ ժամանակի լոյսին մէջ։ Այս առաւանակ, կը խօսի, այսինքն կը գրէ յորդ եւ տաք շունչով մը, որ չըզգար եւ չ'ազդեր ծանծրոյթ։ Իր մէջ գործով վեղուռն հայրը եւ իր աւանդածին լոյսով հմուտ ուսուցիչն է որ կը զգաս միանգամայն. քարոյշի մը՝ որ կը տպաւորէ, որովհետեւ անձնատուր չըլլար հետորական ճոռմութեանց։ Բժախնդիր ըլլալու չափ մաքուր է իր հայերէնը, եւ կենդանի՝ իր ոճը, որ ինքն իսկ է։ — Ու չմոռնալ որ այս գիրքը առաջինն է միայն չարքի մը, որ չեն գիտեր թէ քանի հատորներով պիտի գրաւուի. քանի որ հազիւ կ'ընդգրկէ մինչեւ Մեծն Ներսէսի թուականը, տեսակ մը «սկիզբն երկանց», որմէ վերջ գեւ կան թարգմանչաց եւ անոնց մօտաւոր ու հեռաւոր ոչ նուազ կարեւոր ու բազմաթիւ շրջաններ, որոնց ամենուն պըրիսմակէն է որ պիտի տեսնուի Աւետարանի լոյսին բազմերկիան բայց առհասարակ կարմիրէն տիրապետուած ճառադպրութեամբ ի Հայս։ Բայց ասիկա կէտ մըն է՝ որուն հոգը Սրբազանինն է եւ պիտի լինի առաւելուպէս։ Մեր տեսութեամբ, անոնք որ պիտի ուզեն կարգաւ այս հատորը, հաճոյքով միայն պիտի սպասեն անոր յաջորդներուն։

ԱՐՏՈՅՏ ԱՐԵՂԱՅ

ՆՕԹՔ ԵՒ ՆԻՇՔ

— 0 —

Ազգիս հանրութեան ուղղուած ընդհանրական կոնգակով մը՝ Ամենայն Հայոց վեհ. Ս. Հայրապետը կը ծանուցանէ թէ սրտագինս միխթարուած է՝ խմանալով թէ ի՞նչ ջերմ ընդունելութիւն գտած է Ս. Գրոց Ոսկեղանեան Հայերէնի թարգմանութեան հազարհինգհարիւրաւեակի տօնի կատարման մասին իր հայրապետական հրամանը։ Ն. Ս. Օծուիթիւն նոյն կոնգակով կը հաղորդէ նաեւ թէ տնօրինած է նաեւ որ յետ այսու, աւելն տարի, Սրբոց Թարգմանչաց աշնանային տօնին հետ հանդիսի կատարուի միշտ այդ գրի գիտի։ Ս. Գրոց Թարգմանութեան յիշատակն ալ. իբրեւ «ՏՏՏ ազգային եւ եկեղեցական, ի յիշատակ գիւտի հայկական տառից եւ քաղցնամուտեան Ս. Գրոց»։ Այս բաները, ըստ այսմ, պիտի աւելցուին Օրացոյցին մէջ, Սրբոց Թարգմանչաց անուններէն անմիջապէս վերջը։

Այս կոնգակը պիտի հրատարակուի Սիոնի յառաջիկայ թիւին մէջ. բայց, կարգադրուած է որ, ըստ հրամանի ազգիս վեհին, անոր Ս. Աթոռէս տպագրեալ պատճէնները Ս. Պատրիարք Հօր յարակից շրջաբերականներով միասին զրկուին Սփիւռքի բոլոր Առաջնորդարանները։

Ուրիշ սրբատառ կոնգակով մը, Ն. Ս. Օծուիթիւն իր բարձր գոհունակութիւնը կը յայտնէ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան յօրհիսարն ազգովին կատարման գործը կազմակերպելու համար Ս. Աթոռոյս մէջ այն ատեն գոյութիւն առած կեդր. Յանձնաժողովին, եւ, ի նշան իր հայրապետական գնահատութեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի պատուանշանին Ա. կարգի աւանակուռ խաչը կը շնորհէ Ամեն. Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հօր։

Դարձեալ, երկու առանձին սրբատառ կոնգակներով, Ն. վեհափառութիւնը հրապարակեալ պատիւ կը շնորհէ Ս. Աթոռոյս բազմապատասխան միաբաններէն՝ լուսարարական Գեոր. Տ. Միսրոպ եւ Պատր. փոխանորդ Գեոր. Տ. Մկրտիչ սրբազաններուն։ Ս. Պատրիարք Հայրը, Հալէպէն իր վերադարձի շաբաթ երեկոյին իսկ, նոյեմբեր 7ին, Պատրիարքաբանի մեծ դահլիճին մէջ հաւաքելով ամբողջ Միաբանութիւնը, պաշ-

տոնէութիւնը և ուսուցչութիւնը, պատշաճ հանդիսութեամբ կարգով տուած երկու կոնգրէսները, և ջերմ շնորհաւորութեան խօսքերով անձամբ յանձնեց զանոնք երկու սրբապան արքեպիսկոպոսներուն, որոնց յետոյ շնորհաւորութեան յարգանք մատուցին բոլոր ներկաները:



Ս. Պատրիարք Հայրը ժամանակին ընդարձակ տեղեկագրութիւն զրկած ըլլալով ի Ս. Էջմիածին՝ հազելոյս Բարգէն կաթողիկոսի հիւանդութեան, մահուան, յուղարկաւորութեան եւայն մասին, Ն. Վ. Ամենայն Հայոց Սրբազանագոյն Հայրապետը Հոկտ. 24 թուակիր պատասխանով կը յայտնէ թէ այդ գրութիւնը «Մենք կարգացիք խորունկ վշտով և կակիծով, զի ի դէմս հանգուցեալին Հայ եկեղեցին դիպուեցաւ իր արժանաւորագոյն հոգեւորականներէրէ մէկէն, Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը՝ իր հմուտ եւ կարող ղեկավարէն, իսկ ծերունազարդ Տ. Սահակ Կաթողիկոսը՝ իր աշուտըջ եւ հաւատարիմ լծակցէն, որ բարեխղճութեամբ եւ հաւատարմութեամբ կատարում էր իր պարտականութիւնը հանդէպ Սիւրիոյ Հայութեան: ... «Մխիթարութեմ ենք և շնորհակալ, որ անձամբ ներկայ լինելով՝ թէ՛ յայտնել էք Մեր վշտակցութիւնը Տ. Սահակ Կաթողիկոսին եւ թէ՛ նախազանկ էք յուղարկաւորութեան եւ թաղման տխուր հանդէսներին, կատարելով Ձեր վերջին պարտականութիւնը հանդէպ Մեր եւ Ձեր օժանկեց եղբայրը, միաժամանակ աւելի եւս հանդիսաւորելով տխուր արարողութիւնները»:

«Յուլիսի 12ին (կիրակի օր) Մեր ներկայութեամբ, հաւատացեալ խուռն բազմութեամբ լեցուն Մայր Տաճարում՝ հանդուցեալի յիշատակին Ս. Պատարագ մատուցուեցաւ, զամբանական արտասանուեց եւ ապա Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ. որ շարունակուեցաւ մինչև յաղորդ կիրակին: Այլ և Մեր կարգադրութեան համաձայն բոլոր թեմերում հանգուցեալի յիշատակին հոգեհանգստեան կարգ է կատարուած: Աղօթում ենք մարգասէր Փրկչին, որ հանգուցեալի հոգեւոր հանգիստ և երկնից արքայութիւն պարգեւէ եւ Ամենապատուութեանք արեւատուութիւն շնորհէ»:

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Նոյեմբեր ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյր Փիօրէն Ժողովը ութ, իսկ ԿՐՈՑ. ԴԵՐ. Առանձն՝ եօթ անգամներ նիստ ունեցաւ:

● Կիր. 1 Նոյ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Տարուսիւն, ուր քարոզից Տ. Սեդուրէ Վրդ., զի որ ըստ Աստուծոյն տրամուսխու է, ապաշխարութիւն ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ, իսկ աշխարհի տրամուսխու մահ գործէ (Թ. Կոր. Ե. 10) բնարանով: Բացառութիւն թէ երկու տեսակ տրամուսխու կայ, առաջինին աղբիւրն է Աստուծոյ սէրը, որուն համար մարդ ինքզինքը կ'ենթարկէ տառապանքի. իսկ երկրորդին է աշխարհի և իր առաւ փայլքներուն անսանձ սէրը: Առաջին պարագային, իր յանձն առած նեղութիւններուն համար մարդ չի զղջար ըսաւ. վասնզի կը զգայ թէ անոնք երանկան բան մը կ'աւելցնեն իր մէջ. իսկ երկրորդ պարագային, հետզհետէ կ'ընկճուի իր հետապնդած նպատակներուն աղիտարի հետ անքննելու տակ:

● Եր. 7 Նոյ. — Ս. Պատարագը Հայրը կ'սօրէն քիչ առաջ. իր հետեւորդներով, վերադարձաւ Հայկէս: Միաբանութիւնը Ն. Ամենապատուութիւնը ընդունեց վանքի մեծ դռանէ և առաջնորդեց Պատարագբան:

Բացառութիւնը տեւեռ տանուէկ օր, երբը կատարուած էր երեք օրուան մէջ, Հայֆա-Պէրուս-Թրիպոլի-Լաթաքիա-Անտիոք գիծով: Գիշերած էր միայն թրիպոլի և Լաթաքիոյ մէջ, ուր ժամանակ ունեցած էր տեսնելու Ժողովուրդը, և քարոզելու: Անտիոքի մէջ ցերեկ մը հիւրընկալուեալ էր Տ. Խաչ Սրբազանէն: Նիքոս օր մնացած էր Հայկէս. ուր քարոզած էր չորս անգամ և Նոյ. 1ի կիրակիին պատարագած, ի հանդիստ հոգալու ողբացեալ Տ. Բարգէն վեհին, Ամեն տեղ գտած էր սէր և պատուաբար ընդունուելութիւն Ժողովուրդէն, Ժողովներէն, և Առաջնորդներէն: Հայկէսի մէջ փայեցած էր Տ. Արտաւազ Սրբազանի սէրը և Այն. Պարսն Ա. Մաղլուսեանի սիրալիր աստիճանականութիւնը: Վերադարձը տեղի ունեցած էր չորս օրուան մէջ, Համա-Հոմա-Թրիպոլի-Պէրուս-Անթիպիս-Թիր (Տիրուս) — Հայֆա գիծով: Հոմաի մէջ այցելած էր հայ Ժողովուրդին և Ասորց Ս. Պատրիարքին: Նոյնպէս Թիրի մէջ այցելած էր եկեղեցի և վարժարան. Պէրուսի մէջ այցելած էր Տ. Զաւէն Սրբազանին, որ քանի որ օր առաջ Պաղատանէ հասած և փոխադրուած էր Ամերիկեան Հիւանդանոց: Անթիպիս մնացած էր երկու քիչեր և ցերեկ մը, այցելելով Տ. Սահակ վեհին, Տ. Պէտրոս և Տ. Նիկիէ Սրբազաններուն, և վայելելով ամենուի թանազակի հոգածութիւնը. այցելած էր Դպրեմպեղի դասերուն, և տեղեկացած՝ Հաւատարմութեան յոյժ սրտապնդելի դրութեան:

Վերադարձի երեկոյին իոկ՝ հանդիսապետեց
եշխաշափառայի թափօրին ի Ս. Յարութեան, աբ,
վաղուան Գիւտ Խալի տօնին առթիւ, կիրակա-
մուտի պաշտամունքը կատարուեցաւ մեր Սուրբ
Գրիգոր Լուսաւորչի հիմաւուրք Եկեղեցիին մէջ:

Գիշերը, դարձաւ, նախագահեց Տ. Մեղրոյ
և Տ. Մկրտիչ Սրբազաններու Աբգարեան կոն-
գակներու առթիւ կատարուած եղբայրական
առանին հանդիսաւորութեանց:

● Կիր. 8 Նոյ. (Դիւս Նոյ) — Առաւօտեան և
գիշերային ժամերգութիւնը և Ս. Պատարադի
մատուցում տեղի ունեցան Ս. Յարութեան Տա-
ճարի Ս. Գրիգոր Լուսաւորչի Եկեղեցւոյ մէջ: Ս.
Պատարադը քարոզիչ օրուան տօնին առթիւ, և
ժողովուրդին աւետան երկու Սրբազան Նա-
րբուան Աբգարեան պատմող արժանանալու ի
վերջոյ իր գլխաւորութեամբ կատարուեցան Կե-
նաց ժայռի մասանց մեծահանգը թափօրով
երկոյ շրջաբերութիւնը Ս. Յարութեան Տաճա-
րին մէջ, Ս. Գերեզմանին շուրջը, ի ներկայա-
ւորեան խուռն բազմութեան Յայտապարհի և
ներգաշնակ էին երգեցողութիւնները, օրոնք ե-
ղան մանակութեամբ Միաբանութեան, ժա-
ռանգաւոր սանուց և Սրբոց Թարգմանչաց վաթ-
սարանի ժանկանց:

● Բշ. 9 Նոյ. — Տ. Մեղրոյ Սրբազան եւ Տ.
Սիրն և Տ. Տիրայր Վարդապետք Յուպի գացին
վանական գործով, և երեկոյին դարձան:

— Սրբազանքի Աստուածաբանական Լա-
մարդանի ուսուցչներէն Բրոք, Գլովիլ, որ
շարաթ օր այցելած էր Ս. Պատարադին, այս
երեկոյ բանխոսեց Ընծայաբանի որակին մէջ:

● Դշ. 11 Նոյ. — Մեծ Պատերազմի Զինադա-
դարի տարեդարձին առթիւ, բոտ ամբարութեան,
Լոգեհանգիստ կատարուեցաւ Մայր Տաճարին
մէջ: Ս. Պատարադը հակիրճ ուղեք մը ըրաւ,
մաղթելով որ խաղաղութեան տարեդարձին զու-
ղադիպող ժամանակ ի Պաշտօնին Արքայական
Յանձնախումբին, խաղաղարք ըլլայ Ս. Երկրին
քաղաքական կացութեան համար:

— Տ. Կիրեղ և Տ. Լայրիկ Վարդապետք դա-
ցին ներկայ գտնուիլ Զինուորական Գերեզմա-
նատան մէջ կատարելի հոգեհանգստեան պաշ-
տօնին, յանուն Ս. Պատարադը Հոր ժողկեպոսի
խաչ մը ևս տանելով:

● Եշ. 12 Նոյ. — Ս. Պատարադը, ընկերակ-
ցութեամբ Տ. Կիրեղ Վրդ. Ն. Վ. Բարձր Գա-
միւրէի ապարանքը գնաց և ներկայ գտնուեցաւ
Աբգարական Յանձնաժողովի դռնաբանաց քաց.
ման արարողութեան:

● Եր. 14 Նոյ. — Գիշերը Ընծայաբանի որա-
կին մէջ բանախօսեց Տ. Շնորհ Արեւիյ, ներկին
էր շնորհաւոր կեանքը:

● Գիր. 15 Նոյ. — Մայր Տաճարին մէջ քա-
րոզեց Տ. Տիրան Վրդ. Խոսելով հոգեական օրը-
րութեան վրայ, ընդլայնեց ճգնական կեանքին

ըմբռնումը՝ իր լաւագոյն առումին մէջ, բացա-
րելով տարբարութիւն հոգիին մէջն գաղափարը,
եղբայրացուց թէ որբութիւնը գործ մը ըլլալէ
առաջ պէտք է վիճակ մը ըլլայ, այսինքն մարդ
պէտք է ուրբ ըլլայ ինքն իր մէջ, կարենալու
համար աստուածային որբութեան միջնորդ մը
ըլլալ, ևն.:

● Դշ. 18 Նոյ. — Տ. Ասողիկ Վրդ., որ Հոգեոր
Հովիւ կարգուած է Խարպիւնի Հայոց, Յուպէէն
եկաւ, նախնական պատրաստութեանց համար:

● Եշ. 19 Նոյ. — Ս. Պատարադը, Տ. Ասողիկ
Վրդ. և Տ. Շնորհ և Տ. Արթուր Արեւիյաներու
հետ Երիթով անցուց օրը:

Ուր. 20 Նոյ. — Հրեշտակապետաց վաղուան
տօնին առթիւ երեկոյեան ժամերգութիւնը կա-
տարուեցաւ ի Ս. Հրեշտակապետ:

● Եր. 21 Նոյ. — Ժամերգութիւն և Ս. Պա-
տարադ ի Ս. Հրեշտակապետ. Սրբազան Պա-
րիարքը քարոզեց, գիտելով հրեշտակաց գոյու-
թեան հարցը բարոյական տեսակէտէն մասնա-
ւանդ, բացարդեք թէ մարդուն կեանքը հան-
դէն է իր մէջ տեղի ունեցած բարի և չար ա-
գիներու միջև կատարուած ընդդիմամարտ պայ-
քարին:

Իրկունը Ընծայաբանի որակին մէջ տեղի ա-
նցաւ ներկայ կրթական տարւոյ առաջին գրա-
կան երեկոյթը:

● Կիր. 22 Նոյ. — Ս. Պատարադը մատու-
ցուեցաւ ի Ս. Յարութեան, աբ քարոզեց Տ. Տի-
րայր Վրդ., ընթանալով Երեւանի Երեւանց
յամենայն ժամ ի վերայ ամենայնի, յանուն
Տեառն մեքոյ Յիսուսի Քրիստոսի Հօրն և Աստու-
ծոյն խօսքը (Եփես. Բ. 20). բացարդեք թէ՛ իմ
մարդոց հանգէպ երախտագիտութիւնը հոգիին
ամենէն աշխուական բարեմանութիւններէն
մէկն է, մի միայն այն խաղաղամտով թէ առանց
փոխադարձ օժանդակութեանց անտանելի պիտի
ըլլար կեանքը, ապա ուրիշ, Աստուծոյ հանգէպ
զգացուած ասոն, բարոյականին հինն է ան,
քանի որ Աստուած է միակ բարին, որմէ կը
հառաքայթեն ամեն բարութիւնները, մեր թէ՛
հոգեկան և թէ նրւթական կեանքին մէջ:

● Կիր. 29 Նոյ. — Ս. Պատարադը դարձաւ
մատուցուեցաւ ի Ս. Յարութեան: Քարոզեց Ս.
Պատարադը Հայրը, որ թելագործութեամբ օրուան
Աւետարանի ընթերցուածին (Ղուկ. Թ. 44—50)
խորհրդածեց թէ պէտք է ունենայ ոչ թէ միա-
մտութիւն, այլ արթնատեսութիւն, որ Լաւրին Ըն-
դունայն զոհ շնորհաւու համար պարկեշտ միջոց-
ներու գործադրութիւնն է: Ոչ թէ մեծամտաւ
թիւն, այլ մեծուր ևստամտութիւն ճշմարիտ
աժանիքի, որ ծառայութեան մէջ մանաւանդ
ի յայտ կուգայ: Ոչ թէ անձկամտութիւն, այլ
ներողամտութեան ևս լայնախոհութեան զգա-
ցում, որ կեանքը հասկնալու և հասկնալի ընե-
լու ամենէն արդար և գործնական կերպն է:

Մ Ի Ո Ն

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՑՐԻԱՐԳՈՒԹՅԱՆ

Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն

Ժ. Տ Ա Ր Ի 1936



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ս Ի Ո Ն

ՅԱՆՎԱՆԻ ԵՐԵՐՈՅ 1936 ՅԱՐԵՐՈՅ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. —

Գառեգին Արեւսյա. — Նորագիւտ հայերէն մի կարեւոր արձանագրութիւն Անթրոպի մէջ.	372
Ծովակաւն. — Ժողովրդի հին հայ Թարգմանութիւնները.	45
Սիրաբայ հին հայ Թարգմանութիւնները.	150
Պրոֆ. Ն. Ս. Պոլոնց. — Փղոսկրեայ աւետարանի արուեստը. — Մլրէի աւետարանի գրութեան տարին.	273
Փոքր Սովրատի հեղինակը.	300
Մովսէս Խորենացւոյ «Հայոց պատմութեան» Թուականի մասին.	335
Քննական Տեղեկագիր ի մասին Տ. Գարեգին Արքեպս. Յովսէփեանի «Հոգեւոր Կեդրոն»-ներ եւ Գլաճորի Բարձր Գպրոցը» ուսումնասիրութեան.	366
Խ. Պ. Վարառե. — Հայերէնի հարցեր.	219

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. —

Առէն Երկաթ. — Սրտի բաժակ.	101
Աղօթք առաւօտին. — Յայգային.	176
Հաղորդութիւն.	272
Սուրբ Նշանի վանքը.	294
Սղիվարդ. — Կրտսէն Թէ.	74
Թ. Ե. Գ. —	
Պետրոս Մեթաքսաստ. — Ի ծնունդ փրկչին.	6
René Fauchois. — Երեւակայական մահը.	44
Louis le Cardonnel. — Գիշեր Սուրբ Գիրքին վրայ. Աղօթք.	208, 209
Խօսք իր հոգւոյն հետ.	243
Albert Samain. — Տարօրինակ իրիկուններ կան.	265
«Ճնծան Թարթր եւ Հերմոն»...	362
Հրայ Բաշարեց. —	
Միքէլ Անճելո. — Աղօթք.	299
Ն. Թամաճեան. — Հրեշտակ զուարթուն.	139
Յաւալային Ռեքուիէ. — Աղօթք.	333

ԳՐԱԿԱՆ. —

Գ. Օսկան. — Երբեմն...	14
Մոռցուած բաներ.	113
Տիգրան Երկաթ.	284, 315
Ծ. Թ. Պէրպէրեան. — Փայծառակերպութիւն կամ Խորհուրդ գեղեցկութեան.	211

ԵԿԵՂԵՑԱՊԱՏՄԱԿԱՆ. —

Ա. Այգայանեան. — Գրիգոր Կեսարացի պատրիարք եւ իր ժամանակը.	55, 82, 146, 187, 280, 309, 349
---	---------------------------------

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ. —

Պատկ. Վրդ. Թումայեան. —	
Կոմիտաս վարդապետ. — Հայոց առողջական գրութիւնը.	118
Ծ. Թ. Պէրպէրեան. — Կոմիտաս Վրդ., անձը եւ գործը.	23

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. —

Մ. Ամանոր եւ ծնունդ.	1
«Փոխնորդ խղճմտանք».	35
Երկու տարրերը.	65
«Դեռ աւելի» եւս շարունակէ ընթերցումը...	97
Անթիլիաս...	129
Հոգւով կենսւրը.	166
Վարդապառ.	193
«Այո», աւելի մօտ...	227
«Գէպի Մայրենի եկեղեցին»...	257
Ռէր է Մայր Աթոռայ Նուիրակը.	289
Հանգրուանէն վերջ.	321
Հալէպ եւ Անթիլիաս.	353

ԿՐՕՆԱԿԱՆ. —

Թ. Ե. Գ. — Մայրենի եկեղեցին.	38
Խաչին ճամբան.	69
«Գող եղէ մեղաց, գողը կորչատեան, գուր ինձ փորեցի».	102
Ժ. Պ. — Յիսուսի ուսուցումը ըստ համատեսականներուն. Թաքաւորութեան կատարածը.	133, 169
Մշակ առանց մօմոյց.	292
«Պիտանի Տեառն».	293
Գէշ ժամանակներ.	325
Հոգեկան չափահասութիւն.	326
Կենդանի օրինակը.	356
Ճշմարիտ լայնախոհութիւնը.	358
Մ. Ե. Ն. —	
Ո. Լ. — Հրեաներու այժմեան դիրքը Յիսուսի հանդէպ.	137
Կամուրջ.	175

Պամուէլ Արուսեան. — Տօրթ. Ու. Կրէյլըմ Սքրակի. — Աստուածաշունչի ուսուցումը. (թարգ.) 171, 197
Ֆիդիվարդ. — Ներքողական ճառ երանելոյն Ներսէս Լամբրոնացոյ. 202
Հայրիկ Վրդ. Ասլանեան. — Կոչումը. 71

Կ Ե Ն Ս Ս. Գ Ր Ա. Կ Ա Ն. —

Գ. — Հոգեւոյ Տ. Բարգէն Կաթողիկոս. 238, 269, 295, 327, 358
--

Հ Ա. Յ Ր Ե Ն Ա. Խ Օ Ս Ա. Կ Ա Ն. —

Միտայ Մազիսեան Արքեպ. — Պատմա- կան տեղեկութիւններ Հայաստանի հողերի ռուսական մասին. 49, 78, 140, 181, 276, 305

Մ Ա. Տ Ե Ն Ա. Խ Օ Ս Ա. Կ Ա Ն. —

Արայ Սարգսյ. — Գիրք մը. 381
Պսակ Վրդ. Թումանեան. — Ս. Պատարագի երգերգողութիւնը. 215
Թուսիկ Վրդ. — Neuarmerienische Grammatik. 318

Պ Ա. Գ Ե Ս Տ Ի Ն Ա. Գ Ր Ա. Կ Ա Ն. —

Պ. Ե. Ն. (Հայագոյ) — Զկնորութիւնը Գեն- նեսարէթի ծովակին վրայ եւ Սուրբ Աւետա- րանը. 375
--

Պ Ա. Տ Մ Ա. Կ Ա Ն. —

Մկրտիչ Սպ. Աղանուանի. — Ս. Պրոկոպիոսի եկեղեցին երուսաղէմի մէջ. 20
Ս. Մովսէս մարգարէի եկեղեցիին գիւտը Նարաւ լեռան վրայ. 75
Իսլէմները եւ անոնց շինած եկեղեցին. 109
Տապանակի եկեղեցին Կարիաթարիմի մէջ. 177
Քրիստոնեայ Քիլիան. 345
Պեղորգ Մըսրիան. — Այասի անկումը. 138

Պ Ա. Տ Մ Ա. Կ Ա Ն. Գ Ա. Տ Ո Ղ Ո Թ Ի Ի Ն Ն Ե Ր. —

Վ. Միլիքեանց. — Երուսաղէմի կործանումը. Հրեաները ինչու և ի՞նչպէս կորսնցուցին իրենց աւերակութիւնը. 29

Ս. Յ Ա. Կ Ո Ւ Ի Ն Ե Ր Ս Է Ն. —

ՏՈՒՆՈՒՄ. — Ամսօրեայ լուրեր. 32

ՓԵՏՐՈՒՄ. — Ամսօրեայ լուրեր. Բարեպաշտական նուէրներ. 64
ՄԱՐՏ. — Ամսօրեայ լուրեր. 95
ԱՊՐԻԼ. — Ամսօրեայ լուրեր. 127
ՄԱՅԻՍ. — Ամսօրեայ լուրեր. 157
ՅՈՒՆԻՍ. — Ամսօրեայ լուրեր. 191
ՅՈՒԼԻՍ. — Ամսօրեայ լուրեր. 224
ՕԳՈՍՏՈՍ. — Տխրութեան օրեր. — Կրթական հունձը. — Ամփոփում ամսօրեայ լուրերու. 254
ՍԵՊՏԵՄԲԵՐ. — Ամսօրեայ լուրեր. 288
ՀՈԿՏԵՄԲԵՐ. — Ամսօրեայ լուրեր. 320
ՆՈՅԵՄԲԵՐ. — Ամսօրեայ լուրեր. 351
ԴԵԿՏԵՄԲԵՐ. — Ամսօրեայ լուրեր. 383

Տ Խ Ր Ո Ւ Ն Ի. —

Մեծ սուգը եւ ճշմարիտ սփոփանքը. Դաւիթ Դաւիթեան. 33
Տ. Յարութիւն Վրդ. Պարոնեան. 96
Մեր սուգը. 160
226

Ք Ն Ն Ա. Բ Ա Ն Ա. Կ Ա Ն. —

ՆՈՍՏՐ. — Աւետարանի մօզերը եւ հայոց պատ- մութիւնը, 17

Ա. Յ Լ Ե Ւ Ա. Յ Լ Ք. —

Միւռնօրոնէր Անթիլիասի մէջ. 126
Հայրապետական Պատուիրակին խօսքը. 145
Նօթք եւ նշք. 153, 382
Ամեն. Ս. Պատրիարք Հօր ճառը. 161
Դամբանական ի վերայ Ն. Ս. Երանաշնորհ Տ. Բարգէն աթոռակից կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ. 232
Տիրան Վրդ. Ն. — Իր կրօնական աշխարհայ- եացքը. 241
Սիոն Վրդ. — Հոգեւոր գաստիարակը. 244
Եղիվարդ. — Անկեղծ հսկելորակակը. 246
Թ. Օշական. — Աշխատաւորը. 247
Գ. Միլանեան. — Տ. Բարգէն Ա. Աթոռակից Կա- թողիկոս Տանն Կիլիկիոյ. 250
Շ. Ռ. Պէրպէրեան. — Քարոզիչը. 233
Ջեռնաղորութիւններ՝ Ս. Աթոռայ հոգեւոր ներքեւ. 266
Տեղեկագիր «Մըրց Բարգմանչաց — Դուրեան Գրական Մըցանակի» 1935 — 1936 շրջանի. 337
Մկրտիչ Արքեպ. — Դուրեան Գրական Մըցա- նակարաշխութեան առթիւ կարգադրած ճառը. 363

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Hayrik Aslanian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՆՈՒԷՐ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ ՀԵՏԵՒԵԱԼ ԳԻՐՔԵՐԸ

ԶՐԱՀԱՒՈՐ ԳԱՐՈՒՆ, (Ա. Սեմա), Փարիզ, 1936, էջ 63, ՏՊ. 1 օրինակ. Նուէր
Հեռանալիք

ՀԱՅԷՊԱՍՏԱԲԱՇԽ ՄԱՐՄԻՆ

ԵՐՈՒՍԱԳԵՄ

ՀԱԾՈՒԵԿԾԻՈՒ

5 ՄԱՅԻՍ 1936 — 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1936



Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Hayrik Aslanian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՆՈՒԷՐ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ ՀԵՏԵՒԵԱԼ ԳԻՐՔԵՐԸ

ԶՐԱՀԱՒՈՐ ԳԱՐՈՒՆ, (Ա. Սեմա), Փարիզ, 1936, էջ 63, 8°. 1 օրինակ. նուէր հեղինակէն:

THE SECOND OLDEST CHRISTIAN CHURCH IN BENGAL (Mesroop J. Seth). 1936, էջ 6, 1 օրինակ, նուէր հեղինակէն:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱԳՆԱԳԸ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, (Ա. Պարտիզեան), Ազգային Հասարակագիտական ուսումնասիրութիւն, 1936, Պոսթըն, էջ 440, 8°, 1 օրինակ, նուէր հեղինակէն:

ՀԱՅ ԵՒ ՎՐԱՑԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՈՐԷՆ ՇԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ, (Կէօրդէ Պալլ), Պոսթըն, 1933, էջ 160, 8°. 1 օրինակ, նուէր ձ. Սիրունիէ:

NOTE DESPRE ARTA ARMEANA, ALBUM, (H. Dj. Sirouni), Պոսթըն, 1930, էջ 98, 8°. 1 օրինակ, նուէր հեղինակէն:

DIE MUSIK-ABTEILUNG, (Von Johannes Wolf), Երաժշտական, Լայպցիկ, 1933, 8°. նուէր հեղինակէն:

ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅՍԸ Ի ՀԱՅՍ, (Գարեգին Եպս. Տրապիզոնի), Կրօնա-բարոյական Ազգային, Ա. հատոր, Փարիզ, 1936, էջ 374, 8°, 1 օրինակ, նուէր հեղինակէն:

NEU ARMENISCHE GRAMMATIK, (Dr. Artasches Abeghian), Պերլին եւ Լայպցիկ, 1936, էջ 292, 8°. 1 օրինակ, նուէր հեղինակէն:

ՆԱՀԱՏԱԿ ԳՐՈՂՆԵՐ, (Արմէն Սեւան), Դրական ուսումնասիրութիւն, Գիրք Ա. Ասթիւ, 1931, էջ 158, 8°. 1 օրինակ, նուէր հեղինակէն:

ՎԱԼԷՆԻՒ ԱՌԱՔԵԱԼԸ, (Շրլիկ), Դրական-կենսագրական, Կ. Պոլիս, 1931, էջ 32, 8°. 1 օրինակ:

ԴԱՍԵՐ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ, (Ք. Կ.), Կրօնական, Անթիլիաս, 1936, էջ 448, 8°. 1 օրինակ, նուէր Անթիլիասէն:

L'ÉGLISE ARMÉNIENNE, Ձրանսերէն եւ Երաբերէն, Անթիլիասի Կաթողիկոսութեան Հրատարակութիւն. 1936, էջ 54, 8°. 2 օրինակ:

ՆԱՐԱԼԻՔՆ, (Գոմանտան Դլոտ Պերժէ), Թարգմ. Եղիա Տօլպազեան, Նաբուլէոնի Կեանքն ու պատերազմները, Պէյրութ, 1936, 6-11 պրակները:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՍՐԹԱԶԱՆ ՔՆԱՐ

ՀՈԳՆԼՈՅՍ ԵՂԻԾԷ ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԻ
բոլոր բանաստեղծութեանց հաւաքումը,

ինքնագիր եւ թարգմանածոյ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՇԱՐԱԿԱՆ

ՀՈԳԵԻՈՐ ԵՐԳՈՑ

ՍՈՒՐԲ ԵՒ ՈՒՂՂԱՓԱՌ

ԵԿԵՂԵՑԻՈՅԾ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅՆ ՄԵՐՈՑ

ԵՒ Ի ՍՐԲՈՑ ՇՆՈՐՀԱԼԻՈՅՆ ԵՒ

ՅԱՅԼՈՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՑ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ



Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱԼԷՄ

1936=ՌՅՁԵ